

4685

ԱՆԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ յԵՐԼՐՆԻԼԵ, միացվել.

Գ. ԶԻՆՈՎԵՎ

ԲԱՅԼՃԵՎԻԶՄ

ԹԵ

ՏՐՈՅԿԻԶՄ

300
1694-21

3KП1
9-64



ՇԵՐԵՎԱՆ

1925.

15 JUL 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարները բոլոր յերկրները, միացե՛ք.

14 NOV 2005

Գ. ԶԻՆՈՎԵՎ

300

1694-ԶԻ



ԲԱՅԼՇԵՎԻԶՄ

ԹԵ

ՏՐՈՅԿԻԶՄ

1003
12537

3K71

2-64



1219

1668

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—№ 195.

ՅԵՐԵՎԱՆ — 1925.

008
42-1101



Պետհրատի յերկրորդ տպարանն Յերևանում

Ցիքրամ 5,000.

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՌԵՎԻԶԻԱՆ... ԼԵՆԻՆԻ ԴՐՈՇԱԿՈՎ

Փոքր-իճ, Բեկասի յեմ կու-
սակցութեան՝ հոկտեմբերից հետո՝
առաջին համագումարի մասին.

Ծածկաբար փոխել լենինիզմը՝ արոցկիզմով — ահա մի խնդիր, վոր առաջադրել է Տրոցկին։ Այդ բանը նա սկսել է «մամուտով» ղեկ 1922 թվի վերջին իր «1905 թիվը» գրքի հառաջաբանում։ Սակայն, քանի վոր Լենինը տակավին գրիչն ունեւր ձեռքին, Տրոցկին ուղղակի հարձակվել չէր համարձակվում։

Այժմ ըստ յերևույթին Տրոցկին վճռել է, վոր ժամը հասել է»։ Բայց ռազմագիտութեան բոլոր կանոններով «վճռական» հարված հասցնելուց առաջ, սահրաժեշտ է համարում հրետանու միջոցով նախապատրաստութեան կատարել։ Ծիւի պատանեշի դեր պիտի խաղա հարձակումը ընդդեմ բայլեիզմի. այսպես կոչված «աջ թևի», մասնավորապես տոգերիս գրողի Հոկտեմբերյան սխալի դեմ։

Իրոք. 1917 թ. նոյեմբերի սկիզբին յես մի խոշոր սխալի մեջ եմ ընկել։ Հիւրավի, այդ սխալը մի քանի որվա ընթացքում խոստովանել է ուղղել եմ։ Բայց քանի վոր այդ որերն իսկ սովորական չեյին, այլ վճռական, քանի վոր վայրկենի սրութեանը բացառիկ էր, ուստի է սխալս արտաքու վտանգավոր էր։

Համեմայն դեպս, յես չեմ, վոր պետք է նվազեցնեմ սխալիս չափը։

Վայրկենի արտասովոր սրութեամբ է բացատրվում

վում իսկապես և այն դաժան հակահարվածը, վոր Վլադիմիր Իլյիչն այդ ժամանակ տվեց մեր սխալին: Պատապահանջության բոլոր դրակոնյան միջոցները, վոր առաջադրեց նա այն ժամանակ մեր դեմ, բոլոր այն կրքոտ մտրակութիւնները, վոր տեղացի մեր գլխին, հարկավ, լիովին արդարացի էին: Այդ հարաբերութիւններէից ամենակարճ միջոց հետո՝ Վլադիմիր Իլյիչը—ինչ վոր գիտե ամբողջ Կենտրոնական Կոմիտեն և կուսակցութեան ղեկավար մասը—հենց ինքն այդ ամեն տարածախնութիւնները լուծված համարեց:

Իր «Տրոցկիզմ թե Լենինիզմ» գեկույցում Ստալինը շատ լավ և նկատելի, վոր սեպտեմբեր—հոկտեմբեր շրջանում, մի շարք պարագաների հետևանքով, իր հարձակման ամեն քայլը հեղափոխութիւնն աշխատում եր պաշտպանութեան ձևի տակ անցկացնել: Յեւ այդ հասկանալի չէ, յետեւ նկատելի առնելը կարելի չէ շինարարի հետ կապված բոլոր իրադարձութիւնները: Յետ, վոր այդ ժամանակ թաքւոցում էին գրտնավում, իմ սխալով մի յայտնի չափով զոհ յեղա իսկապես հենց այդ ժամանակամիջոցի յուրահատուկ փութին:

Թե ինչպէս և բացատրվում իմ այն ժամանակվա սխալը և վորոնք են նրա սահմանները—այդ խնդրին մանրամասնորեն կզառնանք մի այլ տեղ (մոտիկ շարթում հուլիս ունիմ մանրամասն ներածութեամբ լույս ընծայել իմ այն ժամանակվա հոգիածները՝ ներանց կցելով մեզ մատչելի բոլոր վավերագրերը):

Այստեղ բավ է ասել հետեւյալը.

Մեր սխալը կատարելուց յերեք տարի անց՝ ակնարկելով այն՝ Լենինը գրում է հետեւյալը.

«Ռուսաստանում նախ քան Հոկտեմբերյան հեղափոխութեանը և նրանից անմիջապես հետո՝ մի շարք լավագուշտ կոմունիստներ սխալ գործեցին, վորի մասին այժմ մեզանում տհաճութեամբ են հիշում: Ինչո՞ւ տհաճութեամբ: Վորովհետեւ սխալ կլինեի, առանց հատուկ հարկավորութեան, վերհիշել այնպիսի սխալներ, վորոնք լիովին ուղղված են: Իմ հիշատակած շրջանում նրանք հայտնաբերեցին տատանմունք, անգամ յերկուուղ այն բանի համար, թե բայելիկները չափազանց չեզոքացնում են իրենց, չափազանց հանդիմանում են գնում ղեկի ապստամբութիւն, չափազանց անզիջող են «մենշեկներին» և «սոցիալիստ-հեղափոխականներին» մի հայտնի մասի հանդեպ: Ընդհարումը հասավ այն չափի, վոր հիշված ընկերները ի մեծ ուրախութեան խորհրդային հեղափոխութեան թշնամիներին, գեմոնստրատիվ կերպով հեռացան կուսակցական և խորհրդային աշխատանքի պատասխանատու գիրքերից: Մամուլի մեջ բանն հասավ ծայրահեղ անողոք բանակովի մեր կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի կողմից ընդդեմ հրաժարվածների: Մինչ մի քանի շաբաթ անց, ամենաշատը մի քանի ամսից հետո, բոլոր այդ ընկերները տեսան իրենց սըխալը և վերադարձան կուսակցական և խորհրդային ամենապատասխանատու գիրքերին (Լենին, աշխատութիւն ունենրի ժողովածու, հատոր 17, էջ 373, ռուս. հրատ.) Լենինն «աջ թեք» մասին և վստ ին խոսք չի ասում:

Յետ ինքս՝ առանց սպասելու Տրոցկու հուշումներին, վոր մեր սխալի մասին ամենից քիչ է կոչված խոսելու՝ ջանացել եմ մեկից ավելի անգամ սխալս լուսաբանել թե մեր կուսակցութեան և թե ամբողջ

Կոմիտեներն առջև։ Որինակ՝ յես խոսել եմ այդ մասին Կոմիտեներն չորրորդ համաշխարհային կոնգրեսի բացմանը, վոր զուգադիպել եր Հոկտեմբերի 5-րդ տարեդարձի որվան, հետեյալն ասելով։

«Այժմ թույլ տվեք ինձ յերկու խոսք անձնական շեղման համար։ Ինձ թվում ե, վոր յես առանձնապես պարտավոր եմ այդ ասել հենց այժմ, հեղափոխության 5-րդ տարեդարձին։ Ընկերներ, դուք գիտեք, վոր հինգ տարի առաջ յես, մի քանի ուրիշ ընկերներով միասին, կատարել եմ խոշոր սխալ, վոր մինչև հիմա համարում եմ ամենամեծ սխալը, վոր յես արել եմ կեսնքիս մեջ։ Այն ժամանակ ինձ չաջողվեց լիովին զնահատել մենշևիկներին ամբողջ հակահեղափոխականությունը։ Հենց դրան պիտի վերագրել մեր սխալի ելույթյունը 1917 թվի Հոկտեմբերից առաջ։ Մի տասնյակից ավելի տարիների ընթացքում մենշևիկների դեմ պայքարելով, յես, ինչպես և շատ ընկերներ այն ժամանակ, այնուամենայնիվ այն վճռական վայրկենին չկարողացանք ազատագրվել այն մտքից, թե՛ մենշևիկներն ու եսերները՝ թեկուզ և աջ Ֆրակցիա, թեկուզ և աջ զորաթև, այնուամենայնիվ բանավոր դասակարգի մասն են կազմում։ Բայց իրապես նրանք հանդիսացել են և հանդիսանում են մեջազգային բուրժուազիայի «ձախ», ամենից ճարպիկ. ժրջան և ազդու, առանձնապես վտանգավոր մի զորաթևը։ Յեվ այդ պատճառով՝ ինձ թվում ե, ընկերներ, վոր մենք պարտավոր ենք հիշեցնել մեր բոլոր ընկերներին...» և այլն։

Յես խոսել եմ սխալիս մասին նույնպես, իմ ամենից տարածված «Ռուսաստանի Կոմունիստական

կուսակցության պատմության» մեջ և դրանից դեռ շատ կանուխ իմ մի շարք յեկույթներում։

Միջազգային բանվորական շարժման վերախըմբավորման գաղափարը.

Պարզապես ծիծաղելի յե սողերիս գրողին բայլչեիզմի «աջ թևին» սեպելը։ Բայլչեիկների ամբողջ կուսակցությանն հայտնի յե, վոր Լենինի հետ ձեռք-ձեռքի գրեթե 20 տարի աշխատելով, յես չեմ ունեցել նրա հետ վոչ մի անգամ քիչ թե շատ սուր տարածայնություն, բացի հիշյալ դեպքից։ Մեր յերկրի համար 1914—1917 թ. թ. դարեշրջանը, իմպերիալիստական պատերազմի սկզբից մինչև պրոլետարական հեղափոխության սկիզբը, բնավ չնչին դարեշրջան չէր։ Հենց այդ տարիներում միջազգային բանվորական շարժման բանակում տեղի ունեցավ վճռական վերախմբավորում։ «Սոցիալիզմն ու պատերազմը» (1915) և «Հոսանքի դեմ՝ Լենինի և Տրոցկու (վերջինս լույս տեսավ Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի շաբաթ առաջ և սովորած ե հեղինակների յերկու հառաջաբանով, վորոնցից մինը թվագրված ե (1912 թ. մարտի սկիզբը) գրքերը պերճախոս ապացույց են, վոր յես այն ժամանակ յերեք չեմ հանդիսացել իբրեւ բայլչեիզմի աջ թևի ներկայացուցիչը։ 1917 թ. ապրիլյան կոնֆերենցիային (վորի իմաստը Տրոցկին այնպես ազավաղել ե) Լենինի հետ ամենաչնչին տարածայնություն անգամ յես չեմ ունեցել։ Այն վեճում, վոր մզվում եր մի կողմից Լենինի, իսկ մյուս կողմից Կամենսկի, Նոգինի և Ռիկովի միջև, յես ամբողջո-

վին Լենինի կողմն ելի, ինչպես այդ հայտնի յե 1917 թ. ապրելյան կոնֆերենցիայի իմ մի շարք գեկույցներն ու ճառերն է:

Նույն այդ վեճը, հարկավ, դուրս չեկավ բայելի վիզմի սահմաններից — թե Լենինը և թե ամբողջ կուսակցությունը խնդրին հենց այսպես ել նայում ելին, և միայն Տրոցկու գրչի տակ ե, վոր այդ վեճը «աջ թևի» պայքարի ընդդիմ ե ստանում. ընդդիմ կուսակցության:

Իմ և Լենինի միջև ամենաչնչին տարաձայնություն յերևան չեն յեկած նույնպես թե հուլիսյան որերին և թե հետո: Յերբ մի քանի շաբաթ յես և Վլադիմիր Իլյիչը ծածկված ելինք միասին թաքստոցում, մենք ազատ ժամանակ ունեյինք ճշտելու մեր հայացքները:

1917 թ. հոկտեմբերի սկիզբներին կարնիլովշինայի լուծարքից և Լենինի «Զիջումների մասին» (վորում Վլադիմիր Իլյիչը առաջադրում եր մենչևիկներին և եսերների հետ հայտնի պայմաններով համաձայնություն գալ) հողվածից հետո իմ մեջ հղացավ առաջին տարաձայնությունը: Իմ սխալն այն եր, վոր «Զիջումների մասին» հողվածի գիծը յես ջանում ելի դեռ շարունակել մի քանի որ ետ: Սոսկ մի քանի որ, բայց այդ որերն այն ժամանակ ամիսների տեղ ելին անցնում:

1917 թվի հոկտեմբերի 10-ին Կենտկոմի հայտնի ժողովում — ուր վճռվեց ապստամբություն հարցը, ուր առաջին անգամ ծայր առավ ապստամբության ժամկետի ու սահմանադիր ժողովի շանսերի գնահատման, շուրջը տարաձայնություն մի կողմից իմ և Կամենևի,

այլուս կողմից Կենտկոմի մնացյալ անդամների միջև — ստեղծվեց ապստամբությունը ղեկավարելու համար Կենտկոմի առաջին քաղաքական բյուրոն: Այդ քաղբյուրոյի մեջ ընտրվում են (վորի մասին կարելի յե կարգով նորերս գտնված արձանայրություն մեջ) յոթ մարդ՝ Լենին, Զինովև, Կամենև, Տրոցկի, Ստալին, Սակոլնիկով և Բուրնով: Հոկտեմբերի 16-ին Կենտրոնական Կոմիտեյի վոչ պակաս կարեոր մի ժողովում պետերբուրգյան աշխատող ընկերների մասնակցությամբ, Լենինի և մեր միջև տեղի ունեցած հակաճառությունից հետո՝ Լենինի վերջնական ձևակերպությամբ առաջարկին ձայն տրվեց 19 թեբ, 2 դեմ, և 4 ձեռնպահ: Իսկ իմ բանաձևին (վոր նույնպես յերևում ե նորերս գտնված գրությունից) տրվեց 6 թեբ, 15 դեմ, ձեռնպահ 3, ընդամեն իմ առաջարկը Վոլոդարսկին մոցրեց իբր ուղղումն Լենինի բանաձևին:

Իմ առաջարկի միտքն այն եր, վոր «մոտալուտ 5 որում մենք ապստամբություն չպիտի կազմակերպենք». մինչև վոր չհամախմբվեն մեր ընկերները և չխորհրդակցենք նրանց հետ, մենք ապստամբությունը սկսելու չենք: Ժողովին քվեյարկություն տված իմ գրավոր առաջարկն ասում եր. — «Հետախուզական, նախապատրաստական քայլերը չհետաձգելով հանդերձ՝ համարել, վոր նախ քան խորհուրդների համագումարի Բայելսկին մասի հետ խորհրդակցելը վոչ մի յելույթ թույլատրելի չե»:

Հենց այդ ժամանակ Լենինը յելնում և մեր դեմ իր հայտնի հողվածներով: Յես շարունակում եմ յեռանդով աշխատակցել Правда-ին: Յերբ յելույթն աղեն վերջնականապես վճռված եր, այն ժամանակ մա-

մուլի մեջ ներս սպրդած չափազանցված տարածաշնու-
թյունները հանգցնելու նկատառումով՝ գրում եմ
խմբագրությանը մի կարճ նամակ «Շարքերը սեղ-
մենք» բնաբանով (վոր զետեղվեց կենտրոնական որ-
գանի խմբագրության ծանոթությամբ թե՛ վեճը վեր-
ջացած է և վոր հիմնապես մենք յեղել ենք և մնում
ենք համամիտ. տես „Правда“ ն. տ. 21 նոյեմբե-
րի, 1917 թիվ)։

Այն ժամանակվա մեր կենտրոնական որգան „Ра-
бочий путь“-ի այն համարում, վոր լույս տեսավ հոկ-
տեմբերի 25-ին ապստամբության որը—խմբագրակա-
նը (վոր ստորագրված չէ) իմն է։ Այդ համարի առաջ-
նորդողին կից յերկրորդ հոդվածը թաքստոցում նըս-
տած լինելով՝ այդ որերը հաճախ գրում էյի յերկու և
ավելի հոդված) դարձյալ գրել եմ յես (և ստորագրել)։
Այդ վերջին հոդվածում կարդում ենք.

«Մեծ խնդիր է գրված խորհուրդների յերկրորդ
Համագումարի առջև։ Պատմության ժամերն արշա-
վում են։ Զարնում է 12-րդ ժամը։ Ամենաչնչին նոր
հապաղումն իսկ սպառնում է ուղղակի խորտակում»։

«Կրիգիսի խաղաղ յեղբի վերջին հույսերն ի դե-
րե են յեղած։ Վերջին խաղաղ հույսերը, վորոնք մին-
չև վերջին որերս խոստովանում եմ—խորթ չեյին—նաև
սողերիս գրողին, կյանքը խորտակեց»։

«Իշխանությունը խորհուրդներին»—ներկա պատ-
մական վայրկենին ամեն ինչ այդ է թելագրում»։

Մեր կենտրոնական որգանի հոկտեմբեր 26 հա-
մարում („Рабочий путь“ № 46) զետեղված է մի կարճ
տեղեկանք՝ թաքստոցիցս դուրս գալուց հետո, ապըս-
տամբության որը առաջին անգամ յերևալուս մասին

Պետրոգրադի խորհրդի հոկտեմբերի 25-ի նիստում։
Ահա թե ինչ ենք կարդում այնտեղ.

«Խոսքը տրվում է Զինուկին, վորին խորհուրդը
բուռն ովացիա յե սարքում»։

Զենովի ճառը.

Ընկերներ ներկա վայրկենին մենք գտնվում ենք
ապստամբության շրջանում։ Սակայն յես գտնում եմ,
վոր վոչ մի տարակույս չի կարող լինել նրա հետե-
անքների նկատմամբ։ Մենք կհաղթենք։

Յես համոզված եմ, վոր գյուղացիության մասը
մեր կողմը կանցնի, յերբ գյուղացիները կծանոթա-
նան մեր սկզբունքներին հողային հարցի մասին։

Կեցցե՛ արդեն սկսվող սոցիալական հեղափոխու-
թյունը։ Կեցցե՛ Պետերի բանվոր դասակարգը, վորն հաղ-
թանակը կտանի մինչև վերջ։

Այսօր մենք պարտահատույց յեղանք միջազգա-
յին պրոլետարիատին, սոսկալի հարված հասցրինք պա-
ռերազմին, հարված բոլոր իմպերիալիստների կրծքին,
մասնավորապես դահիճ Վիլհելմին։

Կորչե՛ պատերազմը։ Կեցցե՛ միջազգային խաղա-
ղությունը»։

Նոյեմբերի առաջին օրերում (հին տոմարով)
նորից մեր շրջանում սուր կերպով բորբոքվեց տարա-
ձայնություններ այն վայրկենին, յերբ արդեն աջ ե-
րերներն ու մենշևիկները ջարդված էյին, յերբ հարց
կը դրված—չի հաջողվե՞ արդյոք խորհրդային իշխանու-
թյան կողմը թեքել ձախ հսերների ու մենշևիկների
լավագույն մասին։

Այդ իսկ որերին յես ի թիվս այլ ընկերների մաս-
նակցություն ունեցա այն հիշատակելի բանակցու-

Թյուճններին Վիկտորի հետ (յերկաթուղայինների այն ժամանակվա կազմակերպություն, վորի վերին խավերը պաշտպանողական էին և վորին այն ժամանակ գերազնահատում էին, յենթադրելով թե Վիկտորի ձեռքում պետք է գտնվի յերկաթուղիների բախտը, հետևապես և նշանակելի չափով նաև քաղաքացիական պայքարի ճակատագիրը): Այդ բանակցությունները տեղի ունեին մեր կուսակցություն կենտկոմի (կնշակի և Լենինի), նաև այն ժամանակվա բանվորական ու գյուղացիական պատգամավորների կենտկոմի կատարյալ համաձայնությունով: Այդ տարաձայնությունները՝ տեղի ունեցան տառացի իմաստով յերկու յերեք որվա ընթացքում, սակայն նրանց սրությունը այդ յերկու-յերեք որում արտասովոր եր:

1917 թիվ, նոյեմբերի 2-ին մեր կուսակցության կենտկոմը Լենինի մասնակցությամբ ընդունեց մի բանաձև, վորում ասվում էր. «Կենտկոմն պնդում է, վոր նա վոչ վոքի չի արտաքսել խորհուրդների յերկրորդ համագումարից և այժմ միանգամայն պարտադիր է յերկրորդ համագումարը թողնողներին հետ դարձնելու (ինչպես հայտնի յե, թողել էին աջ եսերներն ու մենշևիկները) և խորհուրդների մեջ համերաշխությամբ գալու այդ թողնողների հետ, ուստի և բացարձակապես սուտ են այն խոսքերը, վոր իրը թե բռնկիկները վոչ վոքի հետ չեն ուզում բաժանել իշխանությունը: Կենտկոմը պնդում է, վոր այժմյան կառավարությունը կազմելու որը, դրանից մի քանի ժամ առաջ իր նիստին հրավիրել է ձախ եսերներից յերեք ներկայացուցիչ և ձևականորեն առաջարկել է մասնակցել կառավարությանը: Ձախ եսերներին՝ թեկուզ

ժամանակավոր ու պայմանական մերժման հետևանքով չկայացած համաձայնություն ամբողջ պատասխանատվությունը բարդում է հենց իրենց՝ այդ եսերներին վրա: (՝Правда“, № 180, 4/17 նոյեմբերի, 1917 թիվ):

Անշուշտ Լենինի ձեռքով գրված՝ բանաձևի այդ կտորները ընթերցողը պետք է առանձնապես լավ հիշի հետագա ասելիքս ավելի լավ հասկանալու համար:

„Правда“-ում (հոկտեմբերի 30-ից մեր կուսակցության կենտրոնական օրգանը սկսեց նորեն կոչվել „Правда“) նոյեմբեր 4-ի համարում մենք կարդում ենք ամփոփումը իմ այն ձառի, վոր արտասանեցի 1917 թիվ նոյեմբերի 2-ի բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդների կենտրոնական Գործադիր կոմիտեյի նիստում:

«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն (հիշենք, վոր այն ժամանակ մեր կուսակցությունը տակավին կոմունիստական չեր կոչվում) կենտրոնական կոմիտեյի անունից հայտարարում եմ, վոր եսեր ընկերները (խոսքս այն ձախ եսերների մասին է, վորոնց մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն այդ ժամանակ Լենինի գլխավորությամբ ջանում էր կոչել մասնակցելու առաջին խորհրդային կառավարությանը) չպետք է սկսեն իրենց գործը մեզ՝ բալլեիկներին քննադատելուց այն միջոցին, յերբ Մոսկվայի փողոցներում տեղի յե ունենում այն, ինչի մասին խոսում էին այսօր Մոսկվայի մեր պատգամավորները (այդ ժամանակ խորհուրդների համար կոփվեղ զեռ շարունակվում էր Մոսկվայում): Ընդ սմին հիշեցնում ենք եսեր ընկերներին, վոր նախ քան մեր կառավարություն կազմն հրապարակելը, մենք առաջարկել ենք

ընկերներին մտնել կառավարութեան մեջ, բայց նրանք հայտնեցին, վոր կառավարութեան աշխատանքներին կմասնակցեն, սակայն առ այժմ չեն մտնի կառավարութեան մեջ»:

1917 թ. նոյեմբերի 3-ին Պետրոգրադի խորհրդի նիստում (տես „Правда“-ի նոյն Ա-ը) տողերիս գրողն ասել է.

«Ընկերներ, մեր մեջ կան ընկերներ կարմիր-գվարդիականներ, զինվորներ և նավաստիներ, վորոնք մի քանի ժամից հետո պիտի մեկնեն Մոսկվա մեր ընկերներին ու յեղբայրներին ոգնելու համար (բուռն յերկարատե ծափահարութեան): Ռազմա-հեղափոխական կոմիտեն սրանից դեռ յերկու որ առաջ ցանկանում եր մոսկվացիներին ոգնութեան ուղարկել բայց նա հանդիպեց խոչընդոտներ այն կողմից, ուսկից թվում եր թե սոսկ ոժանդակութեան կարելի չեր սպասել: Խոսքս վերաբերում է մի քանի ղեկավար շրջանների, յերկաթուղային ծառայողների վերին խավերին, վորոնք հեղափոխութեան այս ահարկու ժամին «չեզոք» զիրք են բռնել: Բայց այս սարսափելի ժամին չի կարելի լինել վոչ տաք, վոչ սառն: Յես չեմ ուզում սուր խոսքեր գործ ածել, բայց ինքներդ ել ընկերներ, հասկանում եք, թե ապագան ինչպես պիտի բնորոշի այս փաստը: Որքա Մոսկվա մեկնող եշալոնները կանգնեցրված են: Յերբ Վիկտեի ղեկավարներին հարց են տվել թե՛ ինչո՞ւ նրանք այդպես են վարվել, պատասխանել են. «Ձե՛ք վոր կանգնեցրել ենք մենք նաև գլխավոր շտաբից յեկող եշալոններին»: Մի մարդ, վորի կրծքի տակ բաբախում է դեմոկրատական սիրտ, չի կարող բանվորներին ու զինվորներին հնարավորու-

թեանից զրկել իրենց ընկերներին ոգնելու այն առարկութեամբ, թե նա խանգարել է—յեթե միայն իրոք խանգարել է—հակահեղափոխականներին: Անհրաժեշտ է, վոր մենք ղեմենք ստորին յերկաթուղայիններին և բացատրենք նրանց թե ներկա պայմաններում ի՞նչ է նշանակում «չեզոքութեանը»: Յես աներկբա յեմ, վոր ստորին յերկաթուղային ծառայողների ու բանվորների 99 տոկոսը կկանգնի պայքարող զինվորներին ու բանվորներին կողմը:

Կենտրոնական կոմիտեների մի ամբողջ շարք ներկայումս կախված են ոգում: Յավումեմ, վոր վերջիններիս թվին պատկանում է նաև «Վիկտեի»: Վոչ վոք չեր կարող նախատեսել, վոր այն ժամին, յերբ բանվորներն ու զինվորները պիտի մարտնչեն բարեկազմների վրա՝ յերկաթուղայինների ղեկավար որդանը «չեզոքութեան» պետք է պահպանի: Այդ բանին անհրաժեշտ է վերջ տալ: Յերկաթուղային պրոլետարիատը իրր մի մարդ պիտի կանգնի պայքարող բանվորների ու զինվորների կողմը, պետք է ոժանդակի հաղթահարելու բուրժուազիայի ու կալվածատերերի ընդդիմադրութեանը: Այլ ևս հապաղումն անհանդուրժելի յե: Հարկավոր է ամեն ինչ կշռի նժարի վրա նետել վերջնական հաղթանակի ժամը մոտեցնելու համար:

Վողջժւջն հեղափոխական Մոսկվային ոգնութեան գնացող ընկերներին (բուռն, յերկարատե ծափահարութեաններ): Մենք այժմ Մոսկվային վերադարձնում ենք այն, ինչ վոր նա տվել է հեղափոխութեանը 1905 թվին: Նա առաջինն եր, վոր ապստամբից այն ժամանակ, վոր ինքնակալութեանը զիմադրեց վեհ պայքարով: Մենք յերջանիկ ենք, վոր կարող ենք ոգնել

հիմա, վոր հնար ունենք շարաւարտ մեր հաղթական զորքերը դեպի Մոսկվայի ճակատը: Կեցցեն այն ընկերները, վոր մեկնում են Մոսկվա, նրանց և նայում ամբողջ Ռուսաստանը: Վողջ խորհուրդը ազմիալից ովա-ցիա յի սարքում Մոսկվա մեկնող ընկերներին»:

Նոյեմբերի 3-ի գիշերը և նոյեմբերի 4-ի առավոտը ամենապարզած բանակցությունների մոմենտն են. այն որ տարվում էր ձախ հսերների ու Վիկտորի հրավի-րած խորհրդակցության միջև: Հենց այդ մոմենտին էլ մենք ամենամեծ սխալն արինք: Բայց ընկերները Կենտ-րոնական Կոմիտեյին ու ժողովուրդին յիս մի խումբ ընկերներով հայտարարություն ներկայացրի (մեր պա-տասխանատու զերքերը թողնելու մասին՝ պատճառա-բանելով մեր Կենտրոնական Կոմիտեյի անդիջողա-կանությունը) ստորագրված 1917 թ. 4 նոյեմբերի, իսկ 1917 թ. 7-ին տպագրււ տվի „Правда“-ում (տես „Правда“ №138) «Նամակ ընկերներին» վեր-տառությամբ:

Այդ նամակում մենք ասում էինք (բերում եմ ամենակարևոր մասը). «Համառոտական խորհուրդ-ների համագումարի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն առաջադրել և համաձայնության վորոշ պլան, նոյեմ-բերի 3-ի բանաձևը վորին յիս ամբողջապես համամիտ եմ, վորովհետև նա պահանջում է անպայմանորեն ըն-դունել հողի ու հաշտության, բանվորական վերահս-կողության ու խորհրդային իշխանության ճանաչման գեղարտները: Ի պատասխան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի բանաձևին՝ մենք ընկերներն առաջադրեցին մի շարք նախնական պայմաններ. Կենտ. Գործ. Կոմ.-ն չըջանականալով բանակցությունները զժվարացնել, մեր

առաջարկությամբ ընդունեց (ընդգեմ անհաշտներին) վճիռ, վոր մեկզի վանեց այդ բանակցությանց խոչըն-դոտները: Այնուամենայնիվ մյուս կողմը հուզեց Կենտ-րոնական Գործադիր Կոմիտեյին ընդառաջ գնալ: Մեն-շեկներին ու հսերներին կողմից նրա առաջադրած պայ-մաները ժխտվեցին: Հակառակ բոլոր խոչնդոտներին համաձայնության փորձը մինչև վերջը տարվեց, բայց այն—մեզքը մերը չէ—հաջողությամբ չպսակվեց: Այ-ժեմ ապացուցված է, վոր մենշեկներն ու հսերները իսկի համաձայնություն էլ չէին ուղում և լոկ առիթ էին փնտրում այն տապալելու համար: Հիմիկ բոլոր բանվորներն ու զինվորները կիմանան թե թվ է պատաս-խանատուն համաձայնության տապալման համար: Յես այժմ համոզված եմ, վոր ձախ հսերներն էլ պատաս-խանատուությունը համաձայնության տապալման հա-մար կնետեն մենշեկների վրա և կմտնեն մեր կառա-վարության մեջ: Իրերի ներկա վիճակում այն բանից հետո, յերբ մենշեկները մերժեցին՝ Կենտգործկոմի առաջադրած հիմունքներով՝ բանակցությունները, յես համաձայնում եմ ընկերների առաջարկին և Կենտ-գործկոմից դուրս գալու մասին հայտարարությունս հետ եմ վերցնում: Դիմում եմ իմ ամենամոտ համախոհներին: Մենք ամենամեծ դոհարեությունն ենք արել, դուրս գալով բաց բողոքով մեր Կենտկոմի մեծամասնության դեմ ու պահանջելով համաձայնություն: Այդ համաձայ-նությունը, սակայն մյուս կողմը չընդունեց: Ժամա-նակը ծանր է, ծայր աստիճանի պատասխանատու ժամանակ: Մեր պարտքն է կուսակցությանը զգուշա-ցնել սխալներից, բայց մենք պարտավորակցության հետ. մենք գերադասում ենք խոսել խոսակցական



վոր բանվորները ու զինվորները հետ միասին և նրանց հետ միասին մեռնել, քան այս վճռական պատմական վայրկեանին մի կողմը քաշվել: Յերբեք մեր կուսակցութեան մեջ պառակտում չի լինելու և չպետք է լինի»:

Նոյեմբերի 8-ից յես առաջվա պես մասնակցութուն եմ ցույց տալիս մեր կենտրոնական կոմիտեյի աշխատանքներին: Նոյեմբերի 9-ին նրա անունից յես դուրս եմ գալիս Համառուտական Գյուլացիական Համագումարում, իսկ նոյեմբերի 11-ին Պետրոգրադի խորհրդի նիստին մի ճառով այն մասին, թե՛ սահմանադիր ժողովը մենք ընդունում ենք, «յեթե միայն այդ սահմանադիր ժողովը կարտահայտի բանվորները, զինվորները ու գյուղացիների իսկական կամքը»:

Այժմ, հարկավ, յոթ տարի հետո, մեր կուսակցութեան ամեն մի շարքային անդամին հրեշտիկ կը թվա թե՛ ինչպես կարելի չէր կասկածել անգամ, թե՛ Վիկտորի և թե՛ նրա շուրջը խմբված, իբր թե ինտերնացիոնալիստ, հսկողները ու մենչեիկները ունեցած իրական ուժի մասին: Անհրաժեշտ է, սակայն, տեղափոխվել այն ժամանակվա պայմաններին՝ դրությունը ըմբռնելու համար: Հենց Հոկտեմբերյան ապստամբութունից մի կես տարի անց՝ արդեն պարզվեց, վոր ձախ հսկողներն ել հակահեղափոխական ուժ էին դառնում: Մինչդեռ հոկտեմբերին Լենինն ու մեր կենտկոմը յեռանդագին հրավիրում էին նրանց մեր առաջին խորհրդային կառավարութեան մեջ, քանի վոր նրանք այն ժամանակ կապեր ունեւին գյուղացիութեան խոշոր շերտերի ու բանվորութեան մի մասի հետ: Վիկտորի հետ բանակցություններն իսկ, ինչպես ընթերցողը տեսնում է, հենց կենտկոմի հավանութեամբ էլին տեղի ունենում:

Վիկտորյան խորհրդակցութեան միջոցին մենչեիկներին ու հսկողներին մերկացնելու հետեանքն այն յեղով, վոր ձախ հսկողները, վորոնց ապարդյուն կերպով եր հրավիրում առաջներում Լենինը, հիմա մտնում են խորհրդային կառավարութեան մեջ: Մինչդեռ մի գույզ սր առաջ ձախ հսկողները մտադիր էլին մինչև անգամ կենտ. Գործկոմից դուրս գալ, վոր այն ժամանակվա պայմաններում մեծ հարված կլինէր բայլշեփիկներին և կխանգարէր գյուղացիութեանը գեպի մեր կողմը նվաճելուն:

1917 թվի նոյեմբերի 4-ի «Правда-ում» կարգում ենք.

«Ձախ հսկողների ֆրակցիան ուշադրամատուր (վերջնագրի) բնույթ ունեցող հայտագիր է մտցրել կենտգործկոմ՝ յերկու կողմի համար ընդունելի համաձայնութեան պատճառմա մշակելու անհրաժեշտութեան մասին: Կենտգործկոմի մեծամասնությունն այդ պահանջին համաձայնել է և կենտգործկոմի անունից պատճառման մշակել: Յերբ Վիկտորի խորհրդակցութեան միջոցին մենչեիկներն ու հսկողներն այդ պատճառման չընդունեցին՝ ձախ հսկողներն ել իրենց գործելակերպը թիքեցին հոգուտ խորհրդային իշխանութեան»:

«Правда»-ի եջերում այդ որերին տպվում էլին մի շարք կարեւորագույն գործարանների բանաձևեր (տես. արխիւակ, նոյեմբերի 4-ի համարում «Պետիլովցիք մոմենտի մասին»), վորոնցում տպվում էր. «Ճանկալի համարելով սոցիալիստական կուսակցությունների համաձայնությունը, մենք բանվորներս հայտարարում ենք, վոր համաձայնութեանը կարելի չէ հասնել սոսկ

հետևյալ պայմաններով» (Այնուհետև բառացիորեն հիշատակում եյին այն պայմանները, վորոնք մեր ներկայացուցիչները կողմից առաջադրված եյին Վիկտորյան խորհրդակցությանը)։ Այդ սրերին, այն, մենք արտահայտիչ հանդիսացանք այդ բանվորների տատանումներին։ Այդ իմաստով—մեր սխալը վոչ անձնական եր, վոչ էլ պատահական։

Իրերի արդի դրության հայեցակետից, դեպքերից 7 տարի անց, միթե հրեշավոր չե հնչում մեր Կենտրոնական Կոմիտեյի բանաձևի այն բառերը թե՛ «բացարձակապես սուտ են այն խոսքերը, վոր իբր թե բայընկերները վոչ վորի հետ չեն ուզում իշխանությունը բաժանել»։ Բայց չե՞ վոր այդ խոսքերը 1917 թիվ նոյեմբերի 2-ին զրեւ ե ինքը Լենինը, Կենտկոմի եւ խրախուսել ե նրան։ Յուրաքանչյուր մեկը, վոր խորասուզվում ե այդ փաստերի մեջ, նա, ով վերհիշում ե այն, վոր ձախ ետերներն այն ժամանակ գյուղացիության կարեւոր մասն եյին ներկայացնում, ով խորասուզվում ե ընդհանրապես շրջապատի մեջ,—նա կհասկանա այն ժամանակվա մեր սխալի չափն ու բնույթը, անշուշտ, խոշոր, բայց վոչ յերբեք «սոցիալ-դեմոկրատական» սխալ։

Տարածաշրջանային անցավագին անցան.

Այդ ամենն մենք ստույգ ենք վոչ ի հարկե, նրա համար, վոր ապացուցենք թե մեր սխալը փոքր ե Կենտկոմից մենք դուրս ենք ֆնացել միայն յերբեք որ—նոյեմբերի 4-ից 7-ը։ Բայց ե այնպեւ այդ սըխալն յեղել ե՞ ինչպեւ ասել ենք Կոմիտեերնի չորրորդ կոնգրեսի բացման ժամանակ, ամենամեծ սխալը,

վոր մեզ վիճակվել ե կյանքի մեջ գործել։ Իսկ այն, ինչ վոր ուզում ենք այստեղ հաստատել, միայն այն ե, վոր չի կարելի, այդ սխալից յեզրակացնել թե՛ բայընկերմի մեջ «աջ թե» ե գոյության ունեցել։

Ամեն մեկը, վոր ապրել ե այն ժամանակվա հիշատակելի ուրերը, գիտե, վոր ինչքան ել ծանր եյին մոտիկ ընկերների ու բարեկամների անհավ սուր տարածաշրջանայինությունները, բայց ե այնպեւ այդ տարածաշրջանությունները մեծ դառնություն չթողին։ Այն ժամանակ ամեն մեկը մյուսի սխալին վերաբերվում եր կատարյալ անկեղծությամբ՝ առանց ջանալու սըխալն «ոգտագործել» «գիպլոմատիայի» կամ Փրակցիոն նպատակների համար։ Ամենքը հասկանում եյին, վոր արտասովոր մոմենտը առաջ բերեց տարածաշրջանությունները լուծելու արտասովոր միջոցներ, տարածաշրջանություններ, վորոնք մրրիկի նման յեկան, մրրիկի նման ել սրընթաց անցան՝ առանց մեծ փնաս պատճառելու։

Այդ տարածաշրջանությունները վերացան ձնագրնդի պեւ նոր անցքերի հեղափոխության ծանր խնդիրների հորձանքով։ Տարածաշրջանությունները միայն վերին շերտերից անցան։ Բառացի կերպով միայն մի քանի որ անցավ ե սխալվողները խոստովանեցին իրենց սխալը, ու կուսակցության թե զլխավոր շտաբը ե թե ամբողջ կուսակցությունը անցան հերթական անելիքներին։

Վոր այդ տարածաշրջանությունները հեռքեր չեն թողել կուսակցության մեջ, այդ յերևում ե նրանից, վոր Հոկտեմբերյան ապստամբությունից հետո մի քանի շաբաթ անց կայացած առաջին իսկ համագումարում (մենք խոսում ենք յոթերորդ համագումարի

մասին, վոր քննում եր Բրեստի հաշուության խնդիրը), պարզապես վոչ վոք, վոչ մի մարդ վորեւե ֆրազ չարտասանեց այդ տարածաշուկայութիւններէ մասին:

Վոչ վոք մեզ նախատինք չըրպեց այն սխալի համար, թեպետ և այնպես յեղալ, վոր Կենտկոմի հանձնարարութեամբ ինձ վիճակից այդ համագումարում սաստիկ պայքարել Տրոցկու և «ձախերի»*) դեմ, բայց հո պարզ և, վոր կուսակցութիւնը տարածաշուկայութիւններէ թարմ տալովորութեան տակ պետք և վոր մեղավորին ամենայն խստութեամբ դատապարտեր, յեթե նրա մեղքին այնպես վերաբերվեր, ինչպես այժմ Տրոցկին և անում: Յոթերորդ համագումարում, վոր տեղի ուներ, կրկնում ենք, Հոկտեմբերից մի քանի շաբաթ անց՝ պայքարն ընթանում եր բոլորովին այլ գծով: Այժմ արդեն Տրոցկին եր, վոր ազդարարում եր պատասխանատու դիրքերը թողնելու մասին (տես արձանագրութիւնները, էջ 147—148 **):

Տրոցկու և «ձախ» կոմունիստներէ դեմ անցալ Լենինի ու Զինովեի «բանաձևը» (տես արձանագր-

*) Հետաքրքիր և նկատել յոթերորդ համագումարին սոր Կենտկոմի ընտրութեան հետևանքները: Տոյերիս զրոյը Լենինից մի ձայն՝ միայն պակաս ստացալ: Չափից դուրս հետքերական և այդ՝ կուսակցութեան արամագրութիւնը նիշելու համար հատկապես առաջին համագումարում, Հոկտեմբերից մի քանի շաբաթ անց՝ յերբ դեռ բոլորովին թարմ էին նախկին տարածաշուկայութիւններէ հուշերը: Այդ խմտառով յոթերորդ համագումարի արձանագրութիւնները (Պետհրատի հրատարակութիւն, 1923 թիվ) թանկարժեք դաղւամիտներ են:

**) «Կուսակցական համագումարը, կուսակցութեան բարձրագոյն հաստատութիւնը, անուղղակի ձևով ժխտեց այն քաղաքականութիւնը, վոր յետ միւսներէ հետ միասին անց ելի կոցնսմ Բրեստ-Լիտովսկու մեր պատմիրակցութեան կազմում. այդ քաղաքականութիւնը

յուրութիւնները, էջ 3), իսկ Կենտկոմի տեղից հեռանալու առիթով Լենինն ասաց հետեւյալը.

«Յէս ևս Կենտրոնական Կոմիտեյում գտնվում էլի նման վիճակում, յերբ առաջարկ անցալ թե հաշուութիւնը չպետք և ստորագրվի, ու լուծւում էլի, յերբեք աչք չզոցելով, թե ինքս այդ առաջարկի պատասխանատուն չեմ: Կենտրոնական Կոմիտեյի յուրաքանչյուր անդամը հնար ունի թոթափելու իրենից վորեւե պատասխանատուութիւն՝ առանց նրա կազմից յեղնելու և սկանդալ հորինելու: Ի հարկե, ընկերներ, վորոշ պայմաններում դա թույլատրելի չե, բայց յետ համակարծիք չեմ, վոր դա անհրաժեշտութիւն և, մանաւորապէս խորհրդային իշխանութեան կազմակերպման ժամանակ, վորը հնարավորութիւն և տալիս մեզ ինքնաստուգում կատարել, թե վորքան մենք չենք խղել մեր կապերը մասսաների հետ:

Մեր կուսակցութեան մեջ միայն կես տարի մնալուց հետո Տրոցկին յոթերորդ համագումարում ստեղ-

միջազգային արձագանք գտալ յերկուստեք—թե բանվոր դասակարգի, և թե տիրապետող դասակարգերի մեջ. ուստի և այդ պատմիրակցութեան մասնակիցների անունները ամենաատկի անունները պարձան Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի բուրժուազիայի համար: Գերմանական ու ավստրոհունգարական վոլջ մամուլը լեցուն և մեղադրանքներով Բրեստի տոմսիկու պատմիրակցութեան, մասնավորապես իմ հասցեյին, իր թե խախտման և բոլոր մյուս դժբախտութիւնների պատճառը մենք ենք: Կուսակցութեան համագումարն ուղում եր թե չեր ուղում, բայց նա այդ հաստատեց իր վերջին ձայնավութեամբ, ուստի և յետ հրաժարվում եմ այն ամեն պատասխանատու դիրքերից, վոր մեր կուսակցութիւնն ինձ եր վստահել» (Տրոցկու ճառը յոթերորդ համագումարում, 1918 թիվ, մարտ): Մեր կուսակցութեան մեջ վեց տմիս մեայուց հետո Տրոցկին հրաժարական եր տալիս՝ բայելե-վիկների շրջանում շրջառված այդ բոլորովին արտասովոր ձևով:

ծեց արոցկիստական առաջին կրիգիսը միայն: Այնուհետեւ, ավազ, այդ կրիգիսները կրկնվում են պարբերաբար:

Այժմ Տրոցկին «Հոկտեմբերի դասերում», դեպքերից յոթ տարի անց՝ ասում է, վոր Բրեստի հաշտության հարցում մենք ունեցել ենք «անձնատուր լինելու» գիրք: Դա ասվում է հետին թվով, 1924 թվի սեպտեմբերին: Բայց տեսե՛ք թե ի՞նչ եր ասում ինքը Տրոցկին յոթերորդ համագումարում՝ հոկտեմբերյան տարածայնություններից մի քանի շարաթ անցած:

«Վերջին անգամ Բրեստիտովսկի գնալուց առաջ մենք շարունակ քննում էյինք մեր կուսակցություն հետագա տակտիկայի մասին: Յեւ միայն մի ձայն կենտրոնում (ասենք՝ վոչ թե մեկ, այլ՝ թե կենինը, թե Ստալինը և թե Սվերդլովը նույնն էյին ասում. կամենեք Ֆինլիանդիայում ձերբակալված եր) կողմակից եր հաշտությունն անհապաղ ստորագրելուն. դա Ձինովկի ձայնն եր: Իր տեսակետից նա կատարելապես ճիշտ եր ասում, յես նրան լիովին համաձայն էյի: Նա ասում եր, վոր մենք ձգձգելով՝ կվաթթարացնենք հաշտություն պայմանները, պետք է ստորագրենք հենց հիմա» (Յոթերորդ համագումարի արձանագրություն, էջ 79):

Յեթե Բրեստի հաշտությունն ստորագրելու առաջարկը «անձնատուր լինելու» գիրք եր, ապա այդ գիրքում կանգնած եր Լենին (իրապես Տրոցկու տակտիկան եր տանում դեպի իսկական անձնատուրություն, վոր նույն է թե՛ հեղափոխություն խորտակում): Յեթե 1918 թվի սկզբում հենց ինքը Տրոցկին վերոհիշյալ կարծիքների նման կարծիքներ եր հայտնում, այ-

նուհետեւ ո՞վ կհավատա նրա ներկայիս—1924 թվի—ուշտրապալեմիկական կարծիքներին: Ակնհերե չե՞ արդյոք, վոր այդ ամենն հետին թվով է հերյուրված:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՎ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԻՄ ՍԽԱԼԸ

«Ստրասեգիան ցի ոգնի»

Տրոցկու վերջին յեւույթը («Հոկտեմբերի Դասերը») վոչ այլ ինչ է, բայց յեթե ռեվիզիայի բավական պարզ փորձ կամ մինչև իսկ կատարյալ լիկվիդացիա լենինիզմի հիմունքների: Կանցնի ամենակարճ ժամանակ ու դա ակնհայտ կգտնա մեր վողջ կուսակցությունը, ամբողջ ինտերնացիոնալին: Այդ փորձի մեջ «նորը» միայն այն է, վոր ստրատեգիական նկատառումներով ջանում են ռեվիզիան կատարել Լենինի անունով:

Նույնաման մի փորձ տեսել ենք մենք Բերնշտայնի և բերնշտայնականների արշավանքների սկզբում, յերբ նրանք իջան ասպարեզ մարքսիզմի հիմքերը ռեվիզիայի յենթարկելու:

Միջազգային բանվորական շարժման մեջ Մարքսի գաղափարներն այնքան հանրաճանաչ էյին արդեն, վոր անգամ նրանց սոսկ ռեվիզիան պետք չեղավ, դոնե սկզբում, անցկացնել Մարքսի անունով: Հարկավորվեց մի քառորդ դար ես, մինչև վոր պարտադր ռեվիզիոնիստները կարողացան վերջնականապես նետել դիմակն ու ափաշկարա խոստովանել, թե՛ թեորիայի բնագավառում իրենք միանգամայն հրաժարվում են Մարքսից: Դա կատարյալ անկեղծություն է:

առանձնապես յերևաց 1924 թվի գրականության մեջ՝
Կառուցվու յոթանասնամյակին նվիրված ու նորերս
լույս տեսած ժողովածվում:

Լենինիզմի գաղափարներն հիմիկ այնքան են գե-
րակշռում միջազգային հեղափոխական շարժման մեջ,
հատկապես մեր յերկրում, վոր Լենինիզմի «քննադատ-
ները» անհրաժեշտ են համարում նման վարքագծի
կառչելու: Նրանք լենինիզմի ռեվոլյուցիոն կատարում են
Լենինի անունով, Լենինից վկայություններ բերելով,
լենինիզմի հիմքերին հավատարմության յերդուններ
կարդալով (հարանման պարագաներում հանգուցյալ
Վլադիմիր Իլյիչը սիրումներ կրկնել՝ «և ինչպես ել չեն
հոգնում յերդվելուց»):

Բայց և այնպես՝ այդորինակ «ստրատեգիան» չի
ուզնի: Դրա իմաստը լենինյան կուսակցությունն ար-
դեն պարզել է: Չի անցնի և մի քանի շարաթ ու բո-
լոր կոտորներին ճնճողվները կճովողեն այդ նշանա-
վոր ստրատեգիայի խորտակման մասին:

Տրոցկին հաշվի չե առել մի փոքրիկ բան. չե
վոր մեր կուսակցությունը լենինյան է, թե նա
այնքան հասունացել է, վոր կարողանում է—յերևա-
կայեցեք ի՞նչ—լենինիզմը տարբերել տրոցկիզմից:
Տրոցկու փորձը—մի փորձ է անպիտան միջոցներով:

Վոչ վոքի չի հաջողվի վոչ լիկվիդացիայի յեն-
թարկել լենինիզմի հիմունքները, վոչ անգամ մասնա-
կի ռեվոլյուցիոն յենթարկել լենինիզմի սկզբունքները,
վոչ ևլ այն բանին համեմ, վոր տրոցկիզմը լենինիզմի
մեջ ճանաչվի իբր «որինական յերանգ»: Վոչ վոքի չի
հաջողվի կուսակցությանը համոզել, վոր մեզ այժմ
հարկավոր է լենինիզմի ու տրոցկիզմի մի տեսակ «հա-

մադրություն» (սինտեզ): Տրոցկիզմն այնչափ է պի-
տանի լենինիզմի բաղկացուցիչ մասը համարվելու,
վորքան մի գդալ ձյութը «բաղկացուցիչ մաս» է մեղ-
րի տակառում:

Ի՞նչ է լենինիզմը: Լենինիզմը մարքսիզմն է իմ-
պերիալիստական պատերազմների ու համաշխարհային
հեղափոխության դարեշրջանի, մի հեղափոխության, վորն
անմիջապես ծայր է առել այնպիսի մի յերկրում, ուր
գյուղացիությունը գերակշռող է: Լենինը վոտից գլուխ
պրոլետարական հեղափոխական էր, բայց միևնույն
ժամանակ նա գիտեր, վոր ինքը անմիջապես գործելու
է կանչված մի յերկրում, ուր գերակշռում է գյուղա-
ցիությունը, և ուր պրոլետարիատը կհաղթանակի
գյուղացիության հետ կանոնավոր հարաբերություն-
ները ունենալու դեպքում:

Հանդես 1905 թվի հեղափոխության հրապարա-
կելով «պրոլետարիատի ու գյուղացիության դեմոկրա-
տական զիկտատուրայի մեծ լոգունգը», Լենինը վոչ մի-
այն մի վայրկյան չեղ դադարում պրոլետար-հեղափո-
խական լինելուց, վոչ միայն բուրժուական դեմոկրա-
տիային զիջումներ չեղ անում (մենչևիկները՝ դրանց թը-
վում նաև Տրոցկին, ինչպես հայտնի յե, մեղադրում
էին այդ ժամանակ Լենինին, վոր նա իրեն մարք-
սիստ համարելով՝ իրապես հանդիսանում է իբր թե
բուրժուական դեմոկրատիայի իդիոլոգը), այլ իրապես
արդեն ուղի յեր հարթում այդ ժամին սոցիալիստա-
կան հեղափոխության համար մի այնպիսի շրջապա-
տում, ուր բուրժուական դեմոկրատիան դեռ ևս վոչ մեծ
ուշտ էր ցարական ինքնակալությունը սասանելու: Լե-
նինը դեռ այդ ժամանակ իրեն կոչված զեկավարն էր

համարում պրոլետարական հեղափոխութեան, և իրոք այդպիսին եր: Նա գիտեր և հավատում էր, վոր բայ՝ շեփկյան կուսակցութեանը, այսինքն պրոլետարիատի իսկական անվանգարգը կողմի բանվոր դասակարգին թեակոխելու վորքան կարելի յե հեռուն՝ իր դասակարգային նպատակներն իրագործելու ճամբին, վոր ինքն ու իր կուսակցութեանը դրութեան հետևանքով ամեն ինչ կանեն, ինչ վոր հարկն է, հենց այդ դրութեանը ողտագործելու և նրանից վերցնելու առավելագույնը՝ պրոլետարական շարժման վերջնական նպատակի համար:

Նա հասկանում էր բուրժուա-դեմոկրատական ու պրոլետարա-սոցիալիստական հեղափոխութեանների փոխհարաբերութեաններն այս կերպ. «առաջինը ծավալվելով՝ յերկրորդին է հանգում, յերկրորդը իր բնութացքին իրագործում է առաջին խնդիրները, յերկրորդն ամրապնդում է առաջին գործը: Կռիվը և միայն կռիվն է վճռահատում, թե վորքան կհաջողվի յերկրորդին կիսաճամբին թողնելու առաջինին» (Լենին, աշխատութեանների ժողովածու, հատոր 18, մասն 1, էջ 336):

Ու իմանալով այդ՝ Լենինը հանճարեղ վարպետութեամբ զորաշարժ էր անում յերեք հեղափոխութեանների ընթացքում, միշտ բանվոր դասակարգի գլխին կանգնած, միշտ կոնկրետացնելով յուրաքանչյուր պատմական դրութեան տակտիկան այնպես, վոր ամբողջապես ողտագործի իր դասակարգի շահերի համար:

Հունվարի 10-ին (1905 թվին) Լենինն «այն չեր», ինչ վոր էր հունվարի 8-ին, վորովհետև հունվարի 9-ին տեղի ունեցավ Պետերբուրգի բանվորների հռչակավոր

յեկույթը, վորովհետև հունվարի 9-ին բանվորների հեղափոխական շարժումը մի աստիճան ևս բարձրացավ: Ոգնական ուժեր յեկան «իմ դասակարգը ավելի ուժ առավ, հետևապես և՛ կուսակցութեան թափը զուգընթացաբար նույն կերպ ավելի հզոր պիտի լինի»:

1917 թիվ հոկտեմբերի 24-ին Լենինն «այն չեր», ինչ վոր նա դառնում է 1917 թվի հոկտեմբերի 26-ին: «Մի պարծենալու կովի յեկնելիս, այլ պարծեցիր կըռվից դառնալիս», այսպես էր գրում Լենինը Հոկտեմբերյան ապստամբութեանից մի քանի որ առաջ («կուսակցական ծրագրի վերաքննութեան» հոդվածում): «Զգիտենք վաղը կհաղթենք, թե մի քիչ ուշ (անձամբ տրամադիր եմ կարծելու, վոր վաղը) — գրում եմ այս՝ 1917 թիվ հոկտեմբերի 6-ին — և վոր մենք կարող ենք ուշանալ իշխանութեանը գրավելու», բայց և այնպես վաղը ելի վաղ է և վոչ թե այսօր: Վոչ, թանկագին ընկերներ, մենք դեռ ևս չենք հաղթանակել»: Հենց նույն միջոցին, այդ իսկ պատճառով՝ Լենինը պաշտպանում էր ի միջի այլոց միևնույն ծրագիրը պահպանելու անհրաժեշտութեանը:

Վաղը՝ Հոկտեմբերյան ապստամբութեան հաղթանակից հետո՝ բանվոր դասակարգի հանճարեղ զորավարը «այն չեր» (կամ վոչ բոլորովին նույնը), ինչ վոր էր դեռ այդ հաղթութեանից մի որ առաջ: «Իմ դասակարգն ավելի յե զորեղացել, իմ դասակարգի թշնամիներն ավելի յեն թուլացել, բանվորական հեղափոխութեան միջոցները շատանում են, հետևապես՝ ավելի ճնշում, ավելի՛ համարձակ դեպի առաջ»:

Ահա իսկական Լենինը: Ինչպես մեծ գետը թավալում է իր ալիքներն ու, բառի խիստ առումով

մի վայրկյան հետո չի լինում բնավ նույնը, ինչ վոր եր մի վայրկյան առաջ՝ մնալով միաժամանակ մեծ գետ, — այսպես ել Լենինը, մնալով պրոլետարական հեղափոխութեան մեծ ղեկավարը, մեծ և ամենից առաջ նրանով, վոր պարզ տեսնում եր պրոլետարական հեղափոխութեան կոնկրետ ուղին: Նա գետեր, վոր դա պարտիզի ավազած վողորկ ուղին չէ, վորով դուրբին և ընթանալ: Նա գետեր, վոր դա խիստ դժվարին ու առապար ուղի չէ, վորով պետք է անցկացնել վոչ թե մի բուռն ինտելիգենտների, վորոնք Մարտովի հետ միասին կարող էին կազմել «վոչ-ֆրակցիոնական» ֆրակցիա, այլ — միլիոնավոր բանվորներին, վորոնց՝ յեթե կամենում ենք հաղթանակել՝ անպայմանորեն պետք է հետևեն մեր յերկրի տամնյակ միլիոնավոր գյուղացիները:

Լենինի բանաձևերն ու նշանաբաններն ապրում են, նրանք ընդթափ տողորված են կյանքի «բուրժուանքով», մասսաների պայքարով: Նրանց թափն աճում է միլիոններ շարժման աճումի հետ միասին: Դա վերացական գիծ չէ անող տարածութեան մեջ, ինչպես Տրոցկու մոտ, վորի այդ վերացական, կեղծ-ձախ, «պերմանենտ» գիծը գործնականում զուգակցվում է բնավ վոչ վերացական միութեամբ, մենշևիկներին հետ:

«Բանվորութեան ու գյուղացիութեան դեմոկրատական զիկտատուրա» վեհ լոգոսնուր (1905-1917) «Բանվորութեան և աղքատ գյուղացիութեան զիկտատուրայի» միջոցով (1917) դեպի բանվորութեան փառապան զիկտատուրան, վորն իրականանում է «գյուղացիութեան հետ շագկալի» հիմունքով — անս լենինիզմի ուղին:

Իսկ հին տրոցկիզմի ուղին եր. — Աքսելրոդյան տիպի մենշևիզմից (1913-1915) մենշևիզմի «պերմանենտ» ալլաձուլութեան միջոցով (1905-1917) դեպի հեղափոխութեան կատարյալ հրաժարումն և փոխարինումն մենշևիկյան «կոալիցիայի ալլաձուլութեան» լոգոսնուր (1909-1914)՝ դեպի պատերազմի շրջանի թերատ քաղաքականութեանը:

Յեթե վերցնենք բայլշևիզմի գրական պատմութեանը՝ կարող ենք ասել, վոր այն հիմնապես լուսաբանված է կամ՝ համենայն դեպս, բնույթագծված է Լենինի հետևյալ աշխատութեաններով. — «Ժողովրդի բարեկամները», «Կապիտալիզմի զարգացումն», «Ի՞նչ անենք», «Յերկու տակտիկա», «Պետութեան ու հեղափոխութեան», «Ռենեգատ Կաուցկին» — անս լենինիզմի գրական գլխավոր ուղենիշ ձողերը: Մտասուզվելով հասկանալ, թե ինչ են նշանակում այդ ուղենիշները:

«Ժողովրդի բարեկամները» պլյուս «Կապիտալիզմի զարգացումն» — դա մի հանձարեղ թափանցումն է մարքսիզմի թեորիայի մեջ պլյուս ամենակոնկրետ, ամենախոր ուսումնասիրութեանն այն յերկրի անտեսութեան ու հասարակական կառուցվածքի, ուր պատմաբանություն եր գործելու բայլշևիզմը: «Ի՞նչ անենք» պլյուս «Յերկու տակտիկա» — դա սոցիալ-դեմոկրատական ուղիորդութեանի մի անման քննադատութեանն է, չգերազանցված վարպետութեամբ հիմնավորումն հեղափոխութեան մեջ բանվորական կուսակցութեան դերի մասին. դա մի գյուղացիական յերկրի բանվորութեան տակտիկայի փաստարկումն է բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան նախորդակին, մի այնպիսի հեղափոխութեան, վորը պետք էր ջանալ այնպես

առաջ մղել, վորպեսզի նա վորքան կարելի յի շուտով «գերաճելով» փոխվեր յերկրորդ սոցիալիստական հեղափոխության:

«Պատուիթյուն» և հեղափոխություն» պլյուս՝ «Ռե-
նեզատ կառուցկին» — դա լենինիզմի փոխադրությունն
է գեպի համաշխարհային ասպարեզ, դա («Իմպերիա-
լիզմն իբր կապիտալիզմի նորագույն ետապ» գրքի
հետ) նորագույն իմպերիալիզմի խորաթափանց վեր-
լուծությունն է, և արդեն ծավալվող սոցիալիստական
հեղափոխության տակտիկայի հիմնավորումն, այն հե-
ղափախության, վորն արդեն «գերաճել» եր առաջին,
այսինքն բուրժուա-դեմոկրատական հեղափոխությու-
նից:

Համեմատեցեք այդ ամենը տրոցկիզմի հետ:

**Տրոցկից — ինքնիզինքն հե-
ղափոխականի «կլասիկ» սի-
պարն է.**

Յեթև Լենինը բանվորական հեղափոխականի կլա-
սիկ տիպն է, ապա Տրոցկին ինտելիգենտական հե-
ղափոխականի «կլասիկ» տիպն է: (Մենք այստեղ հա-
մեմատում ենք, հարկավ, վոչ անձանց, այլ յերկու
քաղաքական ուղղությունների ներկայացուցիչներին):
Այդ ինտելիգենտական հեղափոխականն ունի, ան-
շուշտ, ուժեղ գծեր, յերբեմն կարողանում է ձուլվել
պրոլետարական մասսային (յերբ խոշոր վերելքի շրջ-
ջանն է), բայց այն՝ ինչ վոր նրա քաղաքական գոր-
ծունեյության միջուկն է, դա իսկական ինտելիգեն-
տական հեղափոխականությունն է: Դա հեղափոխու-
թյան հերոսն է, ըստ Սուխանովի գրված (ի զուր չն,

վոր այդ «ձախ» մենշևիկյան տեսակի «քաղցր-մեղր»
ինտելիգենտն իր բազմահատոր «պատմության» մեջ
քառասնագույլ տակառներով ջուր է ածում հենց
տրոցկիզմի ջրաղացին):

Սուխանովի «Պատմության» մասին վաղիմիւր
Իլյիչի կարծիքը խիստ կարևոր է, ու մեր այժմյան
վեճերը Տրոցկու գեմ գնահատելիս պիտի կարևոր
նշանակություն ունենա, քանի վոր Տրոցկին մի շարք
հարցերում պարզ ի պարզ կրկնում է Սուխանովին,
գրելով պատմություն «Ըստ Սուխանովի»:

Ահա տրոցկիզմի քաղաքական խտացած կենսա-
գրությունը, վոր պատկանում է Լենինի հեղինակա-
վոր գրչին.

«1903 թվին նա (Տրոցկին) մենշևիկ էր, 1904
թվին հեռացավ մենշևիզմից, վերադարձավ մենշևիկ-
ների մոտ 1905 թվին, ու յտրա-հեղափոխական ֆը-
րագներով միայն զարդարված, 1906 թվին կրկին
հեռացավ, 1906 թվի վերջին ընտրական համաձայ-
նություն էր պաշտպանում կադեաների հետ (այսինքն
փաստապես կրկին մենշևիկներին հետ էր), իսկ 1907
թվի գարնանը, Լոնդոնի համագումարում, ասում էր
թե՛ իր տարբերությունը Ռոզա Լուկսեմբուրգից ա-
վելի շուտ անհատապես նրբությունների, քան քա-
ղաքական ուղղությունների զանադանություն է: Տը-
րոցկին բանագործություն է անում այսօր մեկ ֆրակ-
ցիայի զաղափարական քաղաքից, վաղը — մյուս, և այդ
պատճառով հայտարարում իրեն կանգնած յերկու ֆը-
րակցիայից ել բարձր» — այսպես էր գրում Լենինը
«Ռուսաստանի միջ-կուսակցական պայքարի պատմա-

կան իմաստը» հոդվածում (Աշխատությունների ժողովածու, հ. 11, յերկրորդ մաս, հջ 307—308)։

Ավելացնենք զրան մի զույգ բնույթագիր ևս, վոր Լենինն ինքն է ավելի։

«Բանվորներին մեծագույն ֆնաս ան մարդիկ են հասցնում (նման լիկվիդատորներին ու Տրոցկուն), վորոնք աչքաթող են անում կամ աղճատում են բանվորական շարժման պողափարական պայքարի քսանամյա պատմությունը»։ Այսպես եր գրում Լենինը «Գաղափարական պայքարը բանվորական շարժման մեջ» հոդվածում (տես «Путь» և «Правда» լրագրերը 1914 թիվ. մայիսի 4-ից)։

«Մարքսիզմի վորեւ լուրջ հարցի մասին դեռ Տրոցկին հաստատուն կարծիքներ չի ունեցել, նա շարունակ այս կամ այն տարաձայնությունների «ճեղքի մեջ սողոսկել» և մեկ կողմից մյուս կողմ է վազել, ներկա մոմենտին նա գտնվում է բուռնդիստների կամ լիկվիդատորների բանակում։ Դե՛հ, հասկանալի չէ, այդ պարոնները կուսակցության հետ այնքան ել նազ չեն անում։

Այսպես եր գրում Լենինը «Просвещение» ամսագրում զետեղված հոդվածում (1914 թիվ, 4—5—6 համարները)։

«Տրոցկու և Մարտովի ցանկությունները վորքան ել վոր անձնապես (սուբեկտիվորեն) լավ լինեն, բայց և այնպես նրանք իրենց առարկայական (ոբեկտիվորեն) թեքումներով ջատագովում են ռուսական սոցիալ-իմպերալիզմը»—գրում եր Լենինը «Սոցիալ-դեմոկրատ» ժողովածվի մեջ (№ 1, 1916 թիվ, հոկտեմբեր)։ Յեթե ավելացնենք այդ ամենին և այն՝ վոր իմպերալիստական պատերազմի Վոլջ ընթացքում (1914—1917) Լե-

նինը շարունակաբար Տրոցկուն կառուցկիականների թվին եր դասում (տես, որինակ, Լենինի ու Զինովևի «Սոցիալիզմ և պատերազմ բրոշյուրը»), վերհիշենք և այն՝ վոր Լենինը թե 1917 թվի ապրիլյան կոնֆերենցիայում, թե 1917 թվի ապրիլին գրած «Նամակներ տակտիկայի մասին»-ի մեջ, և թե փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ Լենինը վճռականորեն դուրս եր գալիս տրոցկիզմի հիմնական գաղափարների դեմ՝ այս բոլորից մենք կստանանք մի խտացած պատկերացում այն մասին, թե Լենինը մինչ 1917 թիվը ինչպես եր գնահատում տրոցկիզմը։

Տրոցկիզմի գրական ուղիները.

Վերև մենք խոսեցինք բայլելիզմի զարգացման ճամբան վորակող գրական ուղիների մասին։ Համեմատեցեք այդ տրոցկիզմի զարգացման ճանապարհը վորոշող ուղիներին։ Դրանք Տրոցկու հետևյալ գրքերն են.—«Մեր քաղաքական խնդիրները» (1903 թիվ), «Մեր հեղափոխությունը» (1905—1906 թ.). (ի դեպ Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մոտ, վոր հենց այդ ժամանակ իսկ բավականաչափ փթած եր, Տրոցկու այդ գրքերը մեծ հաջողություն ունեցան), հետո «Наша партия» լիկվիդատորական ամսագրին աշխատակցությունը, այնուհետև մի պայծառ միջոց՝ Կառուցկու մասին գիրքը (1919 թ.), վերջապես, «Նոր կուրս» և «Հոկտեմբերի դասերը» (1923—1924 թ.)։ Տրոցկու ակընհայտ եվոլյուցիան այս վերջին յերկու աշխատություններում ավելի քան պարզ է։

Ինչ եր «Մեր քաղաքական խնդիրները» գրքույկը։ Այդ գրքույկը, վոր ձոնված եր մենչեկիկների նա-

հապետ Աքսելրոդին՝ ամենագոհելի մենչեիկյան թըխ-վածք եր, վորպիսին յերբև և գիտե շմենչեիկյան զրա-կանության պատմությունը: Պարելով իբր թե—«դա-սակարգային» վառարանից (գիտենք մենչեիկների սիս-տեմը, նախապատրաստելով իրապես քաղաքական միու-թյուն լիբերալ բուրժուազիայի հետ, մենչեիկները սիրում էին բայլչեիկներին մեղադրել զասակարգային անվթար հայեցակետ չունենալու մեջ), Տրոցկին այդ զրքոյելում հանգում եր լիբերալ բանվորական քաղա-քականության յեզրակացություններին:

Իսկ «Մեր հեղափոխությունն» ի՞նչ եր, վոր աը-րոցկիզմի առաջին դարեշրջանի ամենա—«ձախ» գիրքն և: Այդ զրքում (տես նույնպես «1905») հիմնավորումն և գտել պերմանենտ (անընդհատ) հեղափոխության հռչա-կավոր թեորիան, վորն այժմ Տրոցկին ուզում և բայլչեիզ-մի շինքին փաթաթել: Այդ «թեորիան» Լենինը և նրա հետ բոլոր բայլչեիկները միշտ ևլ համարել են իբր մենչեիզմի մի ձևափոխություն: Կատարելապես անհասկանալի չե թե ինչո՞ւ 15 տարի անց՝ մենչեիզմի ձևափոխումը պետք և ազդարարվի իբր լենինիզմի բաղկացուցիչ մաս կամ հենց իսկական լենինիզմ, իբր լենինիզմի «սխալները» սրբագրող մի թիորիա: Վոչ ամենքն են հիշում, վոր այդ «ձախ» զրքում՝ վորում իբր պաշտպանվում եր «բանվորական» հեղափոխությունը՝ բայլչեիկյան «պը-րոլետարիատի և գյուղացիության ղեմոկրատական ղիկ-տատուրա» զաղափարի դեմ, Տրոցկին զրում եր:

«Ռուսաստանի տնտեսական պայմաններում վոր-քան հեռուն կարող և թեակոխել բանվոր զասակարգի սոցիալիստական քաղաքականությունը, Վաստահորեն կարելի չե ասել մի բան, վոր նա նախքան յերկրի տեխ-

նիկական հետամնացության մեջ մխրճվիլը, առավել շուտ կհանդիպի քաղաքական խոչընդոտներին:

Ռուսաստանի բանվոր զասակարգն առանց յեվ-րոպական պրոլետարիատի պետական ուղղակի ոժան-դակության՝ չի կարող ձեռքում պահել իր իշխանու-թյունը, և չի կարող ժամանակավոր պետությունը տե-վական սոցիալիստական ղիկտատուրայի փոխել: Վոչ մի վայրկյան չի կարելի տարակուսել այդ բանին (Տրոցկի, «Մեր հեղափոխությունը», 1906, Գլագուհի հրատարակություն, էջ 277—278):

Ի՞նչ և նշանակում «յեվրոպական պրոլետարիա-տի պետական ոժանդակությունը»: Վորպեսզի յեվրո-պական պրոլետարիատը հնարավորություն ունենար ոռոսական հեղափոխությանը «պետական ոժանդակու-թյուն» ցույց տալ, նա նախ և առաջ նախապես պիտի նվաճեր իշխանությունը Յեվրոպայում: Բայց չե վոր այդ մասին, իհարկե խոսք չեր կարող լինել 1905 թվին, կամ առհասարակ մինչև 1914—1917 թ. թ. պատերազ-մը: Այն ինչ Տրոցկին իր «պերմանենտ» հեղափո-խությունը քարոզում եր հենց 1905 թվին:

Ի՞նչ և հետևում դրանից: Հենց այն, վոր՝ կամ ին-քը Տրոցկին լըջորեն չեր հավատում 1905 թ. և վոչ մի «պերմանենտ» հեղափոխության, և այդ ամենը վոճի գեղեցկության համար եր առում, — կամ նա 1905 թվին քարոզում եր «պերմանենտ» հեղափոխություն «պայ-մանով» միայն, յեթե յեվրոպական պրոլետարիատը մեզ «պետական ոժանդակություն» ցույց տար, այսինքն Տրոցկին «հետաձգում եր» Ռուսաստանի բանվորական հեղափոխությունը մինչև պրոլետարական հեղափոխու-թյան հաղթանակը Յեվրոպայում:

Վերջին դեպքում Տրոցկին հանդիսանում է սոցիալ-դեմոկրատական ամենածամծմված հայացքակետի ներկայացուցիչ— թող սկզբնապես «նրանք» հեղափոխություն անեն, իսկ հետո «մենք մի շնչով» բանվորական հեղափոխություն կանենք:

Հենց այդ միջոցին Տրոցկու և մենշևիկների փատական բլոկն արդարացնում է այդ յերկրորդ յերկընտրանքը (հիշենք Լենինի խոսքը. «1905 թվին վերադարձավ մենշևիկներին մոտ»):

Այդ միջոցներում Տրոցկին շատ եր գրում այն մասին թե՛ ուսական հաղթական հեղափոխությունը հնարավոր է միայն իբրև միջազգային հաղթական հեղափոխության մի մասն, վորովհետև արևմտ-յեվրոպական կապիտալը իբր փոխառություններով և նման բաներով պաշտպանում է ցարիզմին:

Այստեղ ճշմարտության սաղմ կա այն չափով միայն, ինչ չափով Տրոցկին բայշևիկների ասածն եր կրկնում: Բայց սովորաբար Տրոցկին չափազանց մեքենայորեն եր ըմբռնում ուսական և միջազգային հեղափոխության այդ կապը, չափից դուրս սխեմատիկ եր դարձնում այն, հարցը չափազանց արտոբակտ ձևով դնելով: Հենց այդ եր, վոր նրան բերում եր խոսքով «ձախ», բայց միանգամայն արտոբակտ դծի, վորն անող տարածության մեջ, գործնականում զուգակցում եր մենշևիկների պաշտպանելուն:

Այն՝ ինչ վոր Տրոցկին

չեր հասկանում

1905 թվի յեվրոպական պրոլետարիատի «պետական պաշտպանության» մասին խոսք լինել չեր կարող: Տարարախտաբար մենք չունենք տակավին այդ պե-

տական պաշտպանությունը և 1924 թվին: Մեր յերկրի պրոլետարական դիկտատուրայի ութերորդ դարում՝ մենք Անգլիայից ստանում ենք վոչ թե, որինալ, պետական պաշտպանություն անգլիական պրոլետարիատի կողմից, այլ Բոլշևիկների ու Չեմբերլենի նոտաները:

Հենց այն պատճառով, վոր Տրոցկու այդ տեսությունը խոսքով միայն ձախ եր, ուստի և նա իրականություն մեջ այնպես հեշտությունամբ, 15 տարիների ընթացքում հաշտվում եր յեփած-թխված մենշևիզմի հետ:

Այստեղ գաղտնիքները հեշտությունամբ բացվում են: Տրոցկին չեր ըմբռնում մեր յերկրի հեղափոխության կոնկրետ ուղին: Նա մինչև հիմա յիլ չի հասկանում գյուղացիության իսկական նշանակությունը մեր հեղափոխության համար:

Յեթե հարկավոր են այլ ապացույցներ ևս, Տրոցկին տվել է իր վերջին աշխատության— «Հոկտեմբերի դասերի» մեջ: Հետևյալ քաղվածքն անելով Տրոցկու «Հոկտեմբերի դասերից», խնդրում ենք ընթերցողին մտասուզվել նրանում:

Հենց հեղափոխության անհասուն վիճակը, պատերազմի ստեղծած կատարելապես ստանձնահատուկ պայմաններն ընձեռնեցին մասն-բուրժուական հեղափոխականներին դեկավարություն կամ, համենայն դեպս, կարծեցյալ դեկավարություն, վոր նույնն եր թե՛ նրանք պաշտպանում էյին և բուրժուազիայի իշխանության պատմական իրավունքները: Բայց դա բնավ չեր նշանակում, թե ուսական հեղափոխությունը կարող եր գնալ միայն ու միայն այն գըծով, վորով ընթացել եր 1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբերը: Այդ վերջին ուղին վոչ մի-

այն բղխում էր դասակարգային հարաբերություններից, այլև այն ժամանակավոր պայմաններից, վոր ստեղծել էր պատերազմը: Պատերազմի շնորհիվ գյուղացիությունը հանդես յեկավ իր կազմակերպված զինավառ ուժով, բազմամիլիոն բանակի ձևով: Նախ քան սեփական դրոշի տակ պրոլետարիատի կազմակերպվելը՝ վորպեսզի իր հետևից տաներ գյուղի մասսաներին, մանր-բուրժուական հեղափոխականները բնական հենարան գտան պատերազմի դեմ հուզված գյուղացիական բանակում: Այդ բազմամիլիոն բանակի ուժով՝ վորից անմիջապես իսկ կախված էր ամեն ինչ, մանր-բուրժուական հեղափոխականները ճշտում էին պրոլետարիատին, ու նրան սկզբում քաշում էին իրենց յետևից:

Վոր հեղափոխություն ընթացքը կարող էր լինել և՛ այլ կերպ, հենց նույն դասակարգային հիմունքների վրա, այդ մասին ամենից լավ վկայում են պատերազմին նախորդող դեպքերը («Հոկտեմբերի Պատերը», էջ 18 և 19, «1917»):

Միթե դա «մարգարիտ չե», ինչպես սիրում էր ասել Վլադիմիր Իլյինը:

Յերբ Լենինը խոսում է հեղափոխության արմատական հարցի, «վորություն ու գյուղացիություն փոխհարաբերությունների մասին, միշտ ել ամբողջ էջեր, ասես, ուզում են մտնել Լենինիզմի քրեստոմատիայի մեջ: Տրոցկու մոտ՝ բոլորովին «հակառակը»:

Մասսուղվեցեք Տրոցկու այդ խոսքերի մեջ: Միթե տրոցկիստական պրոպագանդայի այդ էջերը չեն ձգտում դասագրքի մեջ մուծվելու բեր նույն թի լ՛նչն է, վոր բայելիզմ՝ չե:

1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբեր ուղին բղխում էր — յերևակայեցեք — վո՛չ միայն դասակարգային հարաբերություններից, այլև «այն ժամանակավոր պայմաններից, վոր ստեղծել էր պատերազմը»:

Առաջն զինչ ցուցանե: Դուրս է գալիս, վոր պատերազմը չէր բղխում դասակարգային հարաբերություններից: Դուրս է գալիս, վոր պատերազմը — յերևակայեցեք — յեղել է ինչ վոր բերմունք: Ահա ձեզ «պատահաբար պատահած պատահմունք»: Լավ. հապառուս-յապոնական պատերազմը, վորից ծագել է 1905 թիվ 1917 թվի գլխավոր փորձը (ռեպետիցիան) զիպվածակա՛ն չէր այն, չի հորինել «ժամանակավոր պայմաններ»:

Մտքի լ՛նչ խորաթափանցություն: Յեթե չլիներ իմպերիալիստական պատերազմը, իսկ Լենինիզմն հո ուսուցանում է, վոր իպերիալիստական պատերազմը անխուսափելիություն ծագել է իմպերիալիզմի բոլոր հանգամանքներից «վորպես կապիտալիզմի նորագույն եռապը» (Լենին), այսինքն՝ հետևապես և դասակարգային կռիվ ընթացքից: Յեթե Ռուսաստանը չլիներ գյուղացիական յերկիր, հետևապես և՛ նրա տասմիլիոնանոց բանակը չէր լինի գյուղացիական բանակ: Յեթե այդ գյուղացիական բանակը բուրժուազիայի հորինած իմպերիալիստական պատերազմի դեմ հուզված չլիներ, յեթե հարյուր միլիոնանոց գյուղացիություն տեսակարար կշիռը չճնշեր յերկրի սոցիալ-քաղաքական կյանքի ամբողջ ընթացքին, հապա... այն ժամանակ հեղափոխությունը կընթանար ըստ Տրոցկու և ապշած մարդկությունը կտեսներ տրոցկիզմի ապոթեոզը:

Յեթե վոր, բայց յեվ յեթե...

Վողջ այդ փրկիստիայությունը կարելի չէ հակիրճ, բայց հասկանալի արտահայտել հայտնի ուսուցական ասացվածքով՝ «յեթե վոր, բայց և յեթե...»: Յեթե վոր Ռոսսաստանը չլինեք գյուղացիական յերկիր, բայց և յեթե ուսուցական ցարիզմն ել չըլինեք յեվրոպական իմպերիալիզմի բաղկացուցիչ մի մասը: Յեթե վոր պատերազմի համար հարկավոր չլինեք զորք ունենալ, բայց և յեթե այդ զորքն ել չհուզվեք իմպերիալիստական պատերազմի դեմ: Յեթե վոր ուսուցական բանվոր դասակարգը գործեր մի ալ տեսակի Ռոսսաստանում, բայց վոչ թե մի յերկրում, ուր գյուղական բնակչությունը գերակշռող և, այս... այն ժամանակ տրոցկիզմը իրավացի կլինեք լենինիզմի հանգեպ:

Մեր հեղինակն ըստ յերևույթին գլխի չի ընկնում, վոր՝ «յեթե վոր, բայց և յեթե» չլինեք իմպերիալիստական պատերազմն իր անխուսափելի հետեվանքներով, հապա գուցե և չլինեք 1917 թվի հեղափոխությունը, չեք ել լինի սկզբի համեմատաբար դյուրին հաղթանակը: Մեր հեղինակն ըստ յերևույթին նույն կերպ գլխի չի ընկնում, վոր 1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբեր հեղափոխության զարգացումը «սրտահարար» հաստատել և առանց են ել այբուբենական մի ճշմարտություն թե՛ ամբողջ տրոցկիզմը ու նրա «պերմանենտ հեղափոխության» թեորիան վոչ ալ ինչ էր, բայց յեթե ինտելիգենտական մտացածին սխեմա, վոր զործնականում մենշևիզմի կարիքներին եր ծառայում:

Մի անգամ ել լսենք Լինինին: «Այստեղից ել հետևում և մենշևիկների հրեշավոր, ապուշ, ռենեգատա-

կան (հավատափոխական) զաղափարը, վորով տոգորված և «մեր հասարակական շարժումը» թե՛ «պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրան» իր գասական կիրառումով՝ «հակասում և տնտեսական զարգացման վողջ ընթացքին»... «Մեղանում, մեր դարեշրջանի ամեն մի ճգնաժամին (1905 և 1909) կրարձրանա, և հարկադրաբար կրարձրանա «գեղջուկի հանուր-դեմոկրատական շարժումը»: Այդ հանգամանքի անտես առնելը արմատական սխալ կլինի, վորը փաստորեն կհասցնի մենշևիզմին»:

Այսպես եր գրում Լենինը 1909 թվին («Պրոլետարական հեղափոխություն», N 5/281, էջ 178-179): Իսկ Տրոցկին նույն իսկ 1924 թվին չի հասկանում, վոր «գեղջուկի» դերն այնպիսի մի ճգնաժամին վորպիսին 1917 թվինն եր, դիպվածական չեք, վոչ ել գասակարգային կռիվ ընթացքից մեկուսի մնացած: Մեր հեղինակն ըստ յերևույթին գլխի չի ընկնում, վոր 1917 թվի փետրվարի ու հոկտեմբերի միջոցի մեծ հեղափոխության ընթացքը փայլուն կերպով հաստատեց իսկական լենինիզմը, ի միջի այլոց այն մասում, ուր Լենինը՝ իրեն հատուկ թեորիական անխնայությամբ՝ փշրում եր մենշևիզմի տրոցկիստական ձևափոխումը:

Տրոցկու աշխատակիցն ու նրա «1917» հատորի խմբագիրը՝ Լենցները՝ ամենալուրջ դեմք ընդունելով՝ պնդում և, վոր դեռ 1917 թվի մարտի սկզբում Ամերիկայում (ուր գտնվում եր Տրոցկին փետրվարյան հեղափոխության ժամանակ) «Новый мир» լրագրում պնդում իր հողավածներում խնդրի արծարծումով կանխել և Լենինին ու նրա հռչակավոր «Նամակներ հեո-

վից» հողվածաշարքը: Տրոցկու այդ հողվածներն իրապես ազդեցություն ընդունելով ամենամիջակ հողվածներն են (ի դեպ՝ գրված այն ժամանակ, յերբ դեռ Տրոցկու թանաքը չէր չորացել Յիմերվայլդի ձախերի դեմ գրքած հողվածներում):

«Ե՛յ, դուք, հանգիստ մնացեք: Լավ է վոր ծածկեք ձեր ուխտը եղ ձեր սե հարյուրակային դարպասի տակ, ուր հեշ մի ժամանակ չի հասել ու չի հասնի հեղափոխության ճառագայթը» (Տրոցկի, «1917» էջ 21):

Հիշյալ բոլոր հողվածների մասին՝ այդ քաղվածքը վոր արել ենք այնտեղից՝ տալիս է բավական լավ պատկերացում այն մյուս բոլոր հողվածների մասին՝ վորոնք իբր թե «կանխել» են Լենինին: Տրոցկին անգամ դեռ ևս չգիտեր, թե վորտեղից է հարցն սկսվում այդ ժամին, յերբ Լենինն իր իսկապես հռչակավոր «Նամականեր հեռվից» հողվածաշարքով առաջարկում էր արդեն բանվոր դասակարգին խորհել իսկական Հոկտեմբերի սխեման գրեթե մանրամասներով:

Բայց ցավալին այդ չէ: Վոչ վորք ել չեր սպասում, վոր Տրոցկին կհերքե հայտնի ֆրանսիական առածը թե՛ ամենազեղեցիկ աղջիկն անգամ չի կարող ավելին տալ, քան ունի: Իսկական ցավալին այն է, վոր 1924 թվին՝ սպառնալիքներով լենինիզմի դեմ, նա չկարողացավ մի ավելի խելացի բան ասել, քան այն թե՛ «յեթե վոր, բայց և յեթե» չլինեք իմպերալիստական պատերազմը, և չլինեք մեր յերկրում գյուղացիության գերակշռությունը, հապա տրոցկիզմն իրավացի կլինեք լենինիզմի հանդեպ:

Հարկավոր է արդյոք այլ ապացույցներ, վոր Տր-

ոցկին չի հասկացել, այժմ էլ չի հասկանում, թե ինչպես են դնում բայլշիկները գյուղացիության խնդիրը:

Փթած ընկույզը կլավանա, յեթե թեթեակի նրան վոսկեզոժենք: Նախապատերազմյան տրոցկիզմը, վոր մենշևիզմի մի ձևափոխումն է, ավելի չի լավանա, յեթե նա փորձի վոսկեզոժվել «լենինիզմով»: «Հոկտեմբերի դասերը» կատարյալ ակնհերեությունը ապացուցեցին, ավագ, միայն մի բան, վոր հենց հիմա, պրոլետարական հեղափոխության ութերորդ տարում, Տրոցկին լենինիզմի իսկական ելույթյունը չի հասկացել ու ավելի շատ շփոթում է «հենց այդ կետում» — գյուղացիության հարցում, այն հարցում, վոր հանգիստնում է Տրոցկու գծախառնությունների ամենագլխավոր աղբյուրը, սկսած նրա Բրեստի սխալից, շարունակելով 1921 թվի պրոֆմիությունների հարցի սխալով ու վերջացնելով նորագույն ժամանակների սխալներով:

Տրոցկու «պսիկ» սխալներ.

«Հոկտեմբերի դասերը» պարունակում են գրեթե այնքան սխալ պնդումներ, վորքան ընդհանրապես պնդումներ կան այնտեղ: Ավելի դյուրին է թվարկել այն բացասիկ գլխավածները, յերբ Տրոցկին փետրվար—հոկտեմբերից հետո՝ դեպքերը քիչ թե շատ փաստական ճշտությամբ և ներկայացրել, քան այն դեպքերը, յերբ նա... շեղվել է ճշմարտությունից:

Տրոցկին վերջին տարիներս չի ունեցել ավելի թույլ, ավելի քիչ «պայտած» աշխատություն, քան այս: Նա ամենևին չի ջանացել ծայրը ծայրին հասցնել: Նա այնքան շտապել է կուսակցությանը իր անակնկա-

լը ներկայացնելու, այնքան կրքոտ տենչ ե ունեցել, սիրավիրություններ բարբառելու Կենտկոմի հասցեյին վոր անփութությամբ ե ի կատար ածել իր «յերկտ սիրությունը», վոր ուղղակի ապշեցուցիչ ե՝ նկատ առնելով Տրոցկու սերը դեպ «պլանային» սխտեմը Հենց այդ ե պատճառը, վոր մեր կոմյերիտականները դուրսով վորսում են Տրոցկու սխալը—այն՝ վոր նա շփոթում ե Լենինին Հիլֆերդինգի հետ: (Մահմանադի, Ժողովի հարցում, այսպես կոչված, «կոմերիտացիոն տի պը»—հիմնադիր Ժողովն ու խորհուրդները):

Ի դեպ. «1917»-ի յերկրորդ մասից տեղեկանու ենք, վոր դեռ 1917 թիվ հոկտեմբերի 29-ին Տրոցկին ինքը Ժողովրդական կոմիսարների խորհրդի հանձնաբարությամբ մի կոչի մեջ գրել ե. «Յերկիրը փրկել կարող ե միայն և յեթ աշխատավոր ու շահագործվող դասակարգերի ներկայացուցիչներից բաղկացած հիմնադիր Ժողովը»: Թույլ տվեք հարցնել, ինչո՞ւ դա ավել լավ ե, քան «կոմերիտացիոն տիպը» («1917», մաս II, էջ 133):

Սրանից հետևում ե այն՝ վոր Սակոյլնիկովը «Հոկտեմբերյան դասերի» հարգելի հեղինակին բռնում ե յերբ նա Բագրատելի (1917 թ. Պետերբ. Կոմիտեյ, քարտուղարը) «ձախ» սխալները վերագրում ե... Լենինին (1917 թվի ապրիլյան ցույցի պատմությունը) Սրանից հետևում ե այն՝ վոր Կուռուխենը ղոկումենտները ձեռքին ապացուցում ե, վոր Տրոցկին 1924 թ հունվարին գերմանական հեղափոխության հարցում*

*) Այստեղ կրավի ե մի որինակ. «Անցյալ տարվա յերկրորդ կեսին մենք տեսնում ենք այնտեղ (Գերմանիայում) «գաղափար» գեմոն տարեացիան այն բանի, թե ինչպես կարելի յե աչքաթող անել հա-

ասել ե ուղղակի հակառակը, քան ասում ե այժմ «Հոկտեմբերի դասերում»: Այստեղից հետևում ե և այն, վոր հեղափոխության այնպիսի կարևոր միջադեպեր՝ ինչպես հուլիսյան ցույցի խնդիրը, պայքարը Կրոնշտադի ու անգամ հուլիսյան որերի շուրջը, Տրոցկին լուսաբանում ե ըստ Սուխանովի: Մինչև անգամ «День» լրագրի վոգով և վոչ այնպես, ինչպես իրականության մեջ այդ դեպքերը տեղի յեն ունեցել: Սրանից հետևում ե և այն՝ վոր բայդելիկները տակտիկայի հարցը նախապարամենտի ու դեմոկրատական խորհրդացության վերաբերմամբ լուսաբանված ե այնքան անճիշտ, վորքան և միտումավոր կերպով: Այդ «պատիկ» սխալներն արդեն լուսաբանության են առնվում դեպքերի բավականին հեղինակավոր վկաների կողմից:

Թերևս և մեզ մի այլ տեղում կհաջողվի կրկին դառնալ հեղափոխության մի քանի խիստ կարևոր հարցերի հարանման լուսաբանությանը, ի միջի այլոց, Վադիմիր Իլյիչի հետ ունեցածս բազմաթիվ զրույցների հիման վրա (յերբեմն ամբողջ ցերեկների ու գի-

մաշխարհային պատմական նշանակութուն ունեցող կատարելագույն բացառիկ մի հեղափոխական իրավիճակ» (սխտուցիակ)—այսպես եր գրում Տրոցկին 1924 թիվ սեպտեմբերին «Հոկտեմբերի դասերում»:

«Ցեթե կուսակցությունը (գերմանական կոմունիստական կուսակցությունը) անցյալ տարվա հոկտեմբերին հայտարար ապստամբութուն, ինչպես այդ յենթադրում եյին Բերլինի ընկերները, նա այն Ժամանակ վիզը կտորած ընկած կլիներ»: Այս խոսքերը մենք կադում ենք Ռադեկ—Տրոցկու թեզիսներում 1924 թիվ հունվարին: Հոչի կարելի յերկու կարծիք ունենալ նման հարցում—մեկը 1924 թիվ հունվարին, իսկ մյուսը—1924 թիվ սեպտեմբերին... Դսկ այդպիսի մի հարցում յերկու կարծիք ունենալով՝ չի կարելի այնպես հարձակվել Կոմիտեների Գործադիր Կոմիտեյի վրա, ինչպես վոր անում ե Տրոցկին:

շերտերի ընթացքում, որինակ. յերեք շաբաթ վրանի տակ, և այլն): Իսկ հիմա անցնենք այնպիսի խնդիրների, վորոնք անհապաղ լուծարանության կարիք ունեն:

Ֆայլեգիկյան կուսակցութունն ունեցե՞լ և արգյո՞ւ աջ թե՛վ.

Այդ հարցին անհրաժեշտ և տալ բոլորովին պարզ պատասխան: Բայլեգիգմի իսկական պատմությունն իմացող ամեն մեկն առանց տատանվելու կպատասխանի այդ հարցին թե՛ չի ունեցել և չեր կարող ունենալ:

Ինչո՞ւ չեր կարող ունենալ: Ամեն միւնը, ով բայլեգիգմի պատմությունը գիտե վոչ թե լսովի, ով «լենինիզմ» բառը սնտոի կերպով չի կրկնում, — այդ հարցին չի դժվարանա պատասխանել:

— Չեր կարող լինել, քանի վոր բոա Լենինի կառուցված բայլեգիկյան կուսակցության ամենահիմնական սկզբունքը բացասում և աջ ու ձախ թեքի կարելիությունն անգամ: Չեր կարող լինել, քանի վոր Լենինիզմը միաձույլ կուսակցություն և, մի ամբողջական կտորից ձուլված կուսակցություն: Չեր կարող լինել, քանի վոր բայլեգիկների ու մենշեկիների առաջին պառակտումը սկսվեց արդեն 1903 թվին, 1905 թվի առաջին հեղափոխության արշալույսին:

Իտալական սոցիալիստական կուսակցության առիթով Լենինը գրել և. համաշխարհային պատերազմից մի քանի տարի առաջ կատաղի ազգայնամոլների ձեռքով տեղի ունեցած նրա առաջին պառակտումը —

վոչ բոլորովին լրիվ, վոչ արմատական, այլ թեթևակի պառակտումն անգամ ոգնել և իտալական սոցիալիստական կուսակցությանը 1914 թվի իմպերիալիստական պատերազմի առաջին շրջանում գրավել ավելի վայելուչ դիրք, քան ունեյին այն սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, վորոնք մնացին «միացյալ», մինչև շուրջ 1917 թիվն ու ավելի ուշ»:

Յուրաքանչյուր մեկը, վոր կարդացել և 1914-1915 թվերին գրած Լենինի հոդվածները գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մասին (տե՛ս «Հոսանքի գեմ» ժողովածուն), հիշում և թե ինչպե՛ս Լենինը կրակոտ կերպով. կոչ եր անում գերմանական սոցիալ-դեմոկրատիային պառակտվելու, թե ի՞նչ մեծ հույսեր եր կապում այդ պառակտումին, թե ինչ կերպ եր մեկնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կատարյալ սնանկությունը, վոր պայմանավորված եր աջ ու ձախ թեքի պառակտման ուշացումով և այլն:

«Յերկրորդ ինտերնացիոնալի դարեշրջանում սոցիալիստական կուսակցության տիպարն եր հանդիսանում այն կուսակցությունը, վորն իր ներսում հանդուրժում եր «խաղաղ» շրջանի տասնամյակների ընթացքում հետզհետե կուտակված ողբորոյունիգմը, վորը հարմարվում եր հեղափոխական բանվորներին, փոխ եր առնում նրանց մարքսիստական տերմինոլոգիան և խոսափում պարզ, սկզբունքային սահմանադեմքերից: Այդ տիպն արդեն հնացել և: Իտալական կուսակցությունը Յերկրորդ Ինտերնացիոնալի դարեշրջանի համար մի բացառություն և. ողբորոյունիստները Բիսսոլատիի գլխավորությամբ կուսակցությունից արտաքսվեցին: Կրիգիսի ընթացքում հե-

տեանքները գերազանց զուրս յեկան։ Ամենեկին մենք
չենք իդրալացնում իտալական սոցիալ-դեմոկրատա-
կան կուսակցությունը, ամենեկին չենք յերաշխալո-
րում, վոր նա լիովին ամուր կ'մնա, յեթե Իտալիան
մասնակցի պատերազմին։ Այդ կուսակցության ապա-
գայի մասին մենք չենք խոսում, այլ այժմ նկատի
ունենք միայն ներկան։ Մենք արձանագրում ենք այն
անվիճելի փաստը—յեւրոպական յերկրներէ մեծ մա-
սի բանվորությունը ոպպորտյունիստների ու հեղա-
փոխականների կեղծ միութեամբ խաբւել եւ այժմ Ի-
տալիան այն յերջանիկ յերկիրն եւ ուր նման խա-
բեյությունն այլ եւ չկա։

Այն՝ ինչ վոր յերջանիկ բացառությունն եր Յերկ-
րորդ Ինտերնացիոնալի համար, լինելու յե եւ պետք ե
լինի Յերրորդի համար կանոն։ Քանի դեռ կա կապի-
տալիզմը, պրոլետարիատը միշտ ել հարեան պիտի
մնա մանր-բուրժուազիային։ Խելացի չի լինի մերժել
վերջինս հետ յերբեմնապես ժամանակավոր միութեու-
նը, սակայն ոպպորտյունիստների հետ միանալն այժմ
կարող են ուղարկանել միայն ե յեթ պրոլետարիատի
թշնամիները կամ մեր նոր ապրած դարեշրջանի հի-
մարացած հնամուկները («Հոսանքի դեմ», «Իսկ հետո
ի՞նչ» հոդւածից, եջ 32—33)։

Ո՛վ մտասուզվի այդ խոսքերի մեջ, նա կհասկա-
նա թե ինչո՞ւ Լենինի՝ մենշեւիկներին ու Տրոցկու դեմ
կռվի ընթացքում ստեղծած կուսակցութեան մեջ չեր
կանող լինել աջ թե։ «Մեր Ռուսաստանի կուսակցու-
թյունը ոպպորտյունիստական խմբակների ու տարրե-
րի հետ վաղուց խզել ե կազմակերպչական կա-
պը։ Ոպպորտյունիզմի կշռաքարը յերբեք մեր կուսակ-

ցութեան վտարելից կախված չե յեղել։ Հենց այդ
հանգամանքն ոգնել ե նրան կատարելու իր հեղա-
փոխական պարտքը, ինչպես իտալական ընկերներին
ոգնել ե պառակտումը» —այդպես եր գրում Վլադիմիր
Իլյիչը «Սոցիալիզմն ու պատերազմը» բրուշուրում
(Գլ. 2)։

«Անկախ բանվորական կուսակցութեան պատկա-
նող անգլիացիք, ի հարկե, ամենաբուռն կերպով կը-
պաշտպանեն սոցիալ-շովինիզմին՝ ներուժն շնորհելու
համար. այս ախար կդիմակաւորեն ձախերին վողջոյններ
տալով։ Անշուշտ, ոկիստներին (1912 թվի մենշեւիկ-
յան կազմակերպչական կոմիտեյի կողմնակիցները) ե
Տրոցկուն ինքն աստված ե հրամայել այժմ բաց չը-
թողնել կառուցու ե Բերնշտեյնի փեշերը» —գրում եր
Լենինը «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի գործե-
րի վիճակը» հոդւածում («Հոսանքի դեմ», եջ 87)։

Յեթե Տրոցկին այդ ամենի մեջ մտասուզվի, այն
ժամանակ կհասկանա, թե ինչո՞ւ չի կարելի խոսիլ
այն բայլեւիկյան կուսակցութեան աջ թեի մասին,
վոր Լենինն ե ստեղծել կատաղի կռվով ընդդեմ բոլոր
վոչ բայլեւիկյան Փրակցիաների, խմբակների ե այլ
եայլ հոսանքների։ Բայլեւիզմը զարգացել ե վոչ
գերմանական, ե վոչ ել մինչեւ անգամ իտալական
ձևով։

Լենինիզմի ամբողջ ուշոյն այն ե, վոր բայլեւ-
վիզմը Լենինի դեկաւարութեամբ դեռ սրանից 20 տա-
րի առաջ սոցիալ-դեմոկրատիայի աջ թեի դեմ պայ-
քար ե սկսել, ե այդ պայքարը հասցրել ե իր վախ-
ճանին։

Ով փոքր ինչ հասկանում ե Լենինիզմի թեորիան

և տակտիկան ու կազմակերպչական սկզբունքները, նա չի կարող պնդել թե՛ բայլեկիկյան կուսակցության մեջ յեղել ե աջ թև:

Բայլեկիկյան աջ թև—դա բացարձակ անմտություն է: Այդ նույն ե թե ասե՛լ «փայտյա պողպատ», «ջերմ ձյուն» և այլն: Բայլեկիկյան իր հիմունքով հենց նրանով է տարբերվել մենշևիկից, վոր չեր կարող թույլ տալ և թույլ ել չեր տալիս կազմել կուսակցությունն այնպես, վոր նա լինի ամենատեսակ հոսանքներ—աջ, ձախ, կենտրոն, և այլն —բոլոր (ժամանակավոր գործակցություն):

**Մեր կուսակցությունը
ձուլված ե մի ամբողջա-
կան կսորից**

Հիշեցե՛ք թե ի՞նչ եր գրում էինք կուսակցության եմիգրանտական (տարագիր) շրջանի մասին: Նա ասում եր, եմիգրացիան—արաստվոր հարուստ եր քաղաքական նրբերանգներով—մենշևիկներ, եսերներ, անարխիստներ, մաքսիմալիստներ, վորոնցից ամեն մի հոսանք իր մեջ ուներ մի շարք ենթահոսանքներ—հենց այդ պատճառով այն ամենը ինչ բայլեկիկյան չեր «ասես» պլաստիկով պոկվում եր բայլեկիկյան կուսակցությունից:

Այդպես եր նաև կուսակցության լեզու ու կիսակզալ գոյության շրջանում, մասնավորապես 1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբեր: Այն ժամանակվա լեզու անպարեզում մենք տեսնում ենք քաղաքական կուսակցությունների ֆրակցիաների, յենթաֆրակցիաների, հոսանքների նույն շատությունն ու բազմատեսակությունը:

Անխուսափելորեն այդ ամեն կուսակցությունների ֆրակցաների ու յենթաֆրակցիաների մեջն եր անցնում ամեն ինչ, վոր կատարյալ բայլեկիկյան չեր: (Ավիլով, Վայտինսկի, նաև Գոլդենբերգը—ասա ձեզ կենդանի որինակ. 1905 թ. սրանք յեղել են բայլեկիկյան խոշոր գործիչներ): Իսկ բայլեկիկյան կուսակցությունն այսպիսով մնում եր իրը բյուրեղացնող կենտրոն միայն բայլեկիկներին համար: Հենց այդ պատճառով ել մեր կուսակցությունը ձուլված եր մի ամբողջական կտորից:

Պետք ե ամենեկին չճանաչել վոչ էներինին, վոչ ել լենինիզմը, կարծելու համար թե՛ էներինը կարող եր քիչ թե շատ յերկար ժամանակով հանդուրժել բայլեկիկյան կուսակցության աջ թևի գոյությունը: Ել ավելի կարևորն այն է, վոր բայլեկիկյան կուսակցության աջ թևի հնարավորության հետ չի հաշտվում հենց ինքը լենինիզմը:

Կարող են առաքել, ասելով՝ չե՞ վոր կային հաշտեցնող գույնի բայլեկիկներ, վորոնք շատ նման եյին բայլեկիկյան աջ թևին:

Այո, կային: Հաշտեցնող գույնի բայլեկիկները միջադեպային դեր կատարեցին բայլեկիկներին ու մենշևիկներին պառակտման սկզբնական շրջանում—1903—1904 թ. թ., այնուհետև հակահեղափոխության տարիներում—1910—1911 թ. թ., բայց հարցը հենց այն է, վոր հաշտեցնող գույնի բայլեկիկներին նույն այդ տատանման մոմենտներին ետպես գործը հասնում եր նրանց պառակտվելուն: Էներինի ղեկավարութամբ եր բայլեկիկյան կուսակցությունը պատրաստ եր կտրելու այդ պատասխիկը, ու մասամբ ել կտրեց, վորպեսզի կուսակցությունը մնա բայլեկիկյան, այսինքն միատարր:

Հաշտեցնող գույնի բայլելիկյան այդ փոքրիկ խմբի պատմությունն ըմբռնելու համար պետք է մրտասուզվել հեռակալ փաստերի մեջ: Բոլոր այդ ախլի բայլելիկներն գրեթե ահագին մեծամասնությունը գտնվում է այժմ մեր շարքերում, ու վոչ վոքի մտքով անգամ չի անցել, թե դա կուսակցության ինչ վոր աջ հոսանքի նման մի բան է:

Իր ժամանակին հանգուցյալ Դուբրովնիսկին (Խոնկենտի) հաշտեցնող շարժման ամենազվազմոր ղեկավարն էր: Բայց նրան ճանաչող հարյուր ընկերներից հարյուրն էլ կասեն, վոր յեթե Խոնկենտին ապրեր մինչև մեր օրերը (նա մեռավ 1912 թ. աքսորում յերբեք էլ չեր լինի և չեր կարող լինել ինչ-վոր աջ հոսանքի ներկայացուցիչ: Մի նշանավոր չափով հարցը բացատրվում է այն ժամանակվա կուսակցական աշխատանքի տաժանկիր պայմաններով: Բանտից բանտ, աքսորից աքսոր ելին քշվում այնպիսի մարդիկ, ինչպես Դուբրովնիսկին ու Նազինը (վորը մի ժամանակ հաշտեցնողական էր) և մի բանտի ու մյուսի արանքում կազմակերպչական հարցերում ընկնում էլին միջադեպային սխալների մեջ: Ի հարկե, յեթե հիշյալ ընկերները տրամաբանորեն զարգացնեին իրենց սխալը՝ կարող էին դառնալ ուղղորտյունիզմի զոհեր, բայց դա չի պատահել և չեր էլ կարող պատահել: Հենց վոր բանը հասնում էր նման միջադեպային յերևույթներին, Լենինը հարցը դնում էր կարող և բանը չեր. կարող վերջանալ այլ կերպ, քան այնպես, վոր նրանք կամ արտաքսվում էին կուսակցությունից կամ կատարելապես յենթարկվում բայլելիկյան կենտրոնին:

Միջադեպային ու վոչ միջադեպային բնույթի հա-
րաձայնություններ

Բնավ դա չի նշանակում թե բայլելիզմի բազմամյա պատմության ընթացքում, վոր լեցուն է խոքունիկ բովանդակությամբ, բայլելիկյան կուսակցության խոշոր աշխատակիցները յերբեք չեն ունեցել տարաձայնություններ ու նրբերանգներ: Պարզապես ծիծաղելի կլինեի նման մի բանի սպասելը—տարաձայնություններ յեղել են:

Որինակ՝ այնպես է յեղել վոր կամենեք 1907 թվ-վին Պետական Դումային բոլորտ անելն է պաշտպա-նել («ձախ» գիրքը), մինչդեռ Լենինը մասնակցելուն կողմնակից էր: Այնպես է յեղել վոր 1910 թվի կեսուկովի պլենումին (վերջին պլենումը մենչիկինների հետ կոմի պլենումին (վերջին պլենումը վճռել էր վորձևու միասին) բայլելիկներն մի մասը վճռել էր վորձևու հետ միասալ մինչդեռ Լենինն ու բայլել-Տրոցկու հետ միասալ մինչդեռ վորոնց թվում նաև վիլյան կենտրոնի այլ անդամներ՝ վորոնց թվում տա-տոգերիս գրողը՝ վճռականորեն հակառակ էլի այդ վոր-ձին: Բայց, իրոք, այդ ամենը միջադեպային տարա-ձայնություններ էլին: Մինչդեռ միջադեպային չի կա-րելի անվանել 1908 թվին «Վալերյոգովցիների» հետ անհամաձայնությունը, վոր տեղի էր քանի տարի:

Այդ «ձախ» կարծեցյալները իրապես պաշտպա-նում էին ուղղորտյունիստական տակտիկա, այսինքն հրաժարվում էին բայլելիզմի հիմունքներից: Ու հենց այդ պատճառով բանը չեր կարող վերջանալ առանց պառակտումի: Բայլելիկյան կազմակերպությունը վը-պերյոդիզմի խմբակին արտաքսեց, ու մեր կուսակցու-թյանը վերագարձան Վալերյոգովցիներից միայն նրանք,

ովքեր արմատապես բուժվել էին իրենց մտայնութ-
յունից: Միջադեպային կոչել չի կարելի նաև պա-
տերազմի հետ կապված այն տարածայնություններն
ևս, վոր վերաբերում էին գեթ առանձին ականավոր
բայլեհիկներին, իմպերիալիստական պատերազմի սը-
կզբում:

Վողջ բայլեհիզմը, ինչպես հայտնի է, գրավեց
իմպերիալիստական պատերազմի դեմ միասնամայն
ճիշտ գերք, յուրացնելով համաշխարհային պատմական
նշանակություն ունեցող նշանաբանը— «Իմպերիալիս-
տական պատերազմը դարձնել քաղաքացիական պա-
տերազմ»: Սակայն բայլեհիզմի առանձին խոշոր աշ-
խատակիցներ՝ ինչպես որինակ՝ հանգուցյալ Գուլդեն-
բերգը, պատերազմի բնույթի խնդրում տատանվե-
ցին, ու բանն հասավ այդ ընկերների հետ կազմա-
կերպչական կապը խզելուն: Իսկ Գուլդենբերգը կարո-
ղացավ վերադառնալ կուսակցության շարքերը լոկ
1920—1921 թ., յերբ նա արմատապես գիտակցեց իր
սխալը:

**Կուսակցությունը աջ քեզ
չե ունեցել ու չե ել կա-
րող ունենալ.**

Ինչով կարելի է բացատրել փետրվարյան հե-
ղափոխության առաջին որերի մի քանի սխալները:

Աշխարհի այլ և այլ կողմերից բայլեհիկների գըլ-
խավոր շտաբ հավաքվում էին իմպերիալիստական
պատերազմի մի քանի տարիներից ու սպիտակ տե-
րորից հետո, վորոնք կտրել էին կապը անգամ ամե-
նամոտ ընկերների և բայլեհիզմի կենտրոնական աշ-
խատակիցների միջև:

Վոմանք Պետրոգրադ վերադարձան հեռավոր ե-
միգրացիայից, մյուսները՝ տաժանակիր բանաբերից,
յերբորդները՝ Սիբիրի ամենախուլ աքսորավայրերից:
Այդ բոլոր ընկերների գլխին պայթեցին համաշխար-
հային խոշոր նշանակություն ունեցող դեպքերը:

Շատ բան սկզբում այնպես չեղ գնում, ինչպես
սպասվում եր: Բայլեհիկներն հեղափոխության առա-
ջին որերին աննշան փոքրամասնություն էին կազ-
մում նուն իսկ Պետրոգրադի բանվորության մեջ:
Բազմամիլիոն զինվորական մասսայի տրամադրու-
թյունը՝ վոր հետագայում Վլադիմիր Իլյիչն անվանեց
«բարեխիղճ պաշտպանողականություն», խոշոր տակ-
տիկական դժվարություններ եր ստեղծում: Վճից մո-
տենալ այդ մասսային, ինչով հարկադրել նրան՝ բայլ-
եհիկների գեթ առաջին ճառերը լսելու: Այդ բոլորն
ի միասին ստեղծեցին դժվարություններ, վորոնք
հասցրին «Правда»-ի սխալներին փետրվարյան հե-
ղափոխության առաջին որերին՝ մինչև Լենինի վերա-
դարձը:

Բայց կարելի է այդ ամենից յեղրակացնել թե՛
բայլեհիկյան կուսակցությունն ուներ աջ թե՛, վոր
Տրոցկին—հատկապես Տրոցկին, վոչ թե մի ուրիշը—
ջանում ե բնույթագծել, վորպես «սոցիալ-դեմոկրա-
տական» կիսամենչեհիկյան թե՛: Այդպես վարվել կարող
ե նա, ով չի ճանաչել և չգիտե ցել բայլեհիկյան կու-
սակցությունն, ով դատում ե «մեկուսի կանգնած»:
ում համար այդ կուսակցության պատմությունը այն
կուսակցության պատմությունն ե, վորին տվյալ անձը
15 տարի մոտեցել և կռիվներով, ու վորն այժմ, 1924
թվին, տալիս ե «հերթական» կռիվը:

1917 թիվ ապրիլի ու սեպտեմբերի միջոցին բայլ-շեխիկները միջև կային լուրջ տարաձայնություններ։ Այդ տարաձայնություններից կարող էլին խմբավորումներ ծագել—յեթե սխալվող ընկերները պնդեցին իրենց սխալները, յեթե դեպքերն ինքնին արագապես չլուծեցին այդ սխալները, յեթե կուսակցությունը միահամուռ չհերքեր այդ սխալները, յեթե կուսակցություն մեջ չլինեին լենինը, այն ժամանակ վրա կհասներ պառակտում կամ բեկվածք. բայց յերբեք—աջ թեի որինականացում չեր լինի։

Խնդիրն ել հենց այդ է, վոր բոլոր այդ «յեթե»-ները իրականություն մեջ չիրագործվեցին և իրագործվել ել չեցին կարող։

1917 թիվ հոկտեմբերի ու նոյեմբերի միջոցին բայլշեխիկները միջև կային սուր տարաձայնություններ։ Այդ ժամանակամիջոցում (և միայն այդ) սխալվողների մեջ գնտվում եր նաև սողերիս գրողը։ Յեթե սխալն անհապաղ չ'խոստովանվեր, յեթե կուսակցությունը միահամուռ չուղղեր այն, յեթե լենինը դարձյալ կուսակցություն մեջ չ'լիներ,—անշուշտ, այդպիսի թեկուզ սակավորյա, բայց և այնպես սուր տարաձայնությունից լուրջ հետևանքներ կարող էլին ծագել։

Բայց ինդիրն ել այն է, վոր ամեն ինչ յեղավ ընդհակառակը։

Բայլշեխիկները ու մենշեխիկները առաջին պառակտումը տեղի ունեցավ 1903 թվին, բոլորովին ինքնուրույն կազմակերպչական կյանք բայլշեխիկմը վարում է 1910 թվից։ 1903 և 1910 թվերի արանքում բայլշեխիկմը բավարար կերպով չեր ձևակերպված իրեն ինքնուրույն կազմակերպություն։

Բայլշեխիկյան կազմակերպության կառուցվածքում 1903 և 1909 թվերի միջոցին, դեռ կարող էլին լինել այս կամ այն անորոշությունները։ Մինչդեռ դրանց մասին այլ ևս խոսք չեր կարող լինել 1910 և 1917 թվերի շրջանում։ Բայլշեխիկյան կուսակցություն աջ թե չի ունեցել և չեր ել կարող ունենալ։ Հակառակը պնդել—նշանակում է հենց միայն այդ պնդումով ցույց տալ բայլշեխիկմի հիմունքների կատարյալ անհասկացողություն։

Իսկ այժմ հնարավոր է կուսակցության աջ թեվի առաջացում։

Իրոք գործուն (ակտուալ) խնդիր. գործուն՝ վոչ միայն մեր կուսակցության, այլ և ամբողջ Կոմիտեների համար։ Հարցն այն չե թե՛ արդյոք 1917 թվին բայլշեխիկներն ունեցել են աջ թե, այլ այն—ներկա մոմենտում կա՞ նման մի թե, ձգտում կա՞ այդպիսի մի թե առաջացնելու, հնարավոր է (թույլատրելի՞ չե) հարանման աջ թեի կազմավորումն Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության մեջ։

Առաջադրելով այդպիսի մի հարց՝ պատասխանում ենք.—այո, թե մեր կուսակցության և թե Կոմիտեներնի մեջ այժմ այդպիսի մի փորձ կատարվում է։ Այդ գործում Տրոցկին է գլխավոր դերակատարը։

Իրական խնդիրը՝ վորով այժմ տառապում է կուսակցությունը՝ այն է թե—կարո՞ղ ենք այդպիսի մի թեի ձևավորումը թույլատրել, և յեթե վոչ՝ ի՞նչ կերպ խուսափել զրանից։ Ուսկի՞ց վարող է ծագել այժմ աջ թե կամ «թեիկ», աջ Ֆրակցիա կամ աջ հոսանք, վորը ուղում է ստեղծել Տրոցկին։

Ծիծաղելի ու հիմար բան կլինի բացատրել այդ

յերեւելիքն իբր այս կամ այն ընկերով անձնական մեղքը: Վոչ. այդ բանի համար կան, անտարակույս, նաև առարկայական որոշելիքներ:

Տարբերության ի՞նչ գծեր կան մեր կուսակցության արդի վիճակի ու նրա նախ քան Հոկտեմբերյան հեղափոխությունն ունեցած դրության միջև: Այդպիսի գծեր մի քանիսն են: Նախ՝ մեր յերկրի քաղաքական կյանքի բաց ասպարիզից չքացել են մենշևիկները, եսերները, անարխիստները և նման խումբակներ: Նախկին բազմաթիվ տարբեր քաղաքական կուսակցությունների, նրբերանգների ու հոսանքների մասին այժմ խոսք չի կարող լինել, համենայն դեպս այն մտքով, վորջափով նրանք զուրկ են ազատ մրցության իրավունքից բանվորների և գյուղացիների լայն շրջանների առաջ: Հաղթանակած բանվոր դասակարգը՝ մեր կուսակցության ղեկավարությամբ՝ պրոլետարիատի գերկառուցողական հաջողությամբ իրագործելու համար՝ չեր կարող լեզալությունից չզրկել եսերներին, մենշևիկներին ու անարխիստներին (հակախորհրդային ուղղության) և մյուս խմբավորումներին, վորոնք հանգիստանում են նույն ինքն պրոլետարիատի գիկաատուրայի գաղափարի թշնամիներ: Լեզալ ասպարիզում գործում է միմիայն Կոմկուսն. այլ կերպ էլ չի կարող լինել ներկա շրջանում: Իրերի նման վիճակում մեր կուսակցությանն անխուսափելիորեն հարում են, յերբեմնապես անգամ մոտնում են նրա շարքերը՝ այնպիսի տարբեր, վորոնք մեզ հետ չեն լին լինի, յեթե մեզանում ուրիշ լեզալ կուսակցություններ գոյություն ունենային: Հենց այդ կարևորագույն հանգամանքը վոչ մի դեպքում ինքնին չի կարող նպաստել մեր կուսակցության միատարրության դարգացման:

Յերկրորդ՝ յերկու տասնամյակի ընթացքում գաղափարապես մենք ջարդել ենք մեր դեմ մրցող յերկու գլխավոր կուսակցություններին—եսերներին ու մենշևիկներին: Այդ կուսակցությունների մի քանի տասնյակ հազար նախկին անդամներ մեր շարքերն են մտել, վորոնց թվում հազարավոր ու հազարավոր նախկին եսերներ ու մենշևիկներ, վորոնք յեղել են այդ կուսակցությունների ակտիվ անդամները: Հերկ ե հիշել միայն Տրոցկուն: Կրկնել ել չարժե, վոր այդ մեղ խորթ կուսակցություններից յեղած՝ ընկերների մեծամասնությունը այժմ լիովին մեր կուսակցության հետ ձուլված է: Նրանք կան, ուղում են և կլինին լավ բայելիկներ: Բայց չարժե թաղցնել և այն, վոր եսերների ու մենշևիկների իբր լեզալ կուսակցությունների լիկվիդացիան, նրանց բյուրավոր նախկին գործոն անդամների դարձը դեպի մեզ՝ վոչ մի դեպքում չի կարող նպաստել մեր կուսակցության միատարրությանը:

Յերկրորդ՝ մեր յերկիրն առհասարակ անցողական շրջան է ապրում: Մինչև 1917 թվի հոկտեմբերը դրությունը շատ կողմերով դժվարին էր, բայց ավելի պարզ: Կուսակցության առաջ դրված էր անմիջական ռազմական խնդիր—բուրժուազիայի տապալումը:

Շատ կողմերով արդի վիճակն առավել բարդ է, խառնաբաղալ: Նեպի հանգամանքները, միջազգային մասշտաբով բուրժուական շրջապատը, այդ ամենը մոմենտներ են, վոր դրությունը չափազանց բարդացնում են: Ամբողջ յերկրագնդի պատմության ընթացքում վոչ մի բանվորական կուսակցություն այնպիսի բարդ անցողական շրջանում չի աշխատել, ինչպես մեր կուսակցությունը:

Զորքերը՝ կուսակցութեան սոցիալական կազմը բազմաաւարտ եւ դարձել։ Յետեւ 1917 թվի հոկտեմբերին մենք ըստ կազմի գրեթե բացառապէս բանվորական կուսակցութիւն ելինք, 1917 թվից հետո—գրութիւնն արդեն փոխվում եւ։ Այս 7 տարվա ընթացքում՝ մեր կուսակցութեան կրած բոլոր իրադարձութիւններէից հետո, մեր շրջանում այժմ մենք ունենք ավելի քան 100,000 գյուղացի կուսակցականներ, մի քանի տասնյակ հազար խորհրդային ծառայողներ եւ այլն։

Ահաւանդեալ եւ կուսակցութեան մասնաւոր միաստորութիւնը

Ի՞նչ են նշանակում մեր բոլոր ջանքերը՝ կուսակցութեան սոցիալական կազմը կարգավորելու համար։ Ի՞նչ են նշանակում վերջիվերջո մեր գտնումները, որոնք կոչերը, մասնավորաբար լենինյան կոչը եւ այլն։ Այդ ամենը՝ ջանքերի մի շղթա յետ կուսակցութեան մաքսիմալ միատարրութիւնը պահպանելու, թույլ չտալու, վոր կուսակցութեան սոցիալական կազմը չափից ավելի չընդլայնվի եւ չափազանց խայտաբղետ չդառնա։ Այդ ամենն ի միասին առած, ստեղծում եւ գրութիւն, ուր իրող հնարավոր եւ աջ թեի ձեւավորում լենինի ստեղծած բայլեիկյան կուսակցութեան մեջ։ Իսկ յետեւ դրան ավելացնենք այն վոչ պակաս կարեւոր գործոնը, վոր ինքը լենինն այլ ևս մեզ հետ չէ, պարզ կը լինի, թե ինչքան պատասխանատու եւ դառնում գրութիւնը։

Յետեւ բայլեիկյան Կենտկոմի դեմ կատարած Տրոցկու հարձակումը մաքրենք այն ամեն զիջվածական, անձնական, բերովի տարրերից, յետեւ մոտե-

նանք նրան մաքսիմալ որդեկալիութեամբ՝ պարզ կը դառնա, թե ի՞նչն եւ դրա իմաստը։—Տրոցկին այդ բոլոր տարիներում մեր կուսակցութեան մեջ հանդիսացել եւ արտահայտիչն այն բոլոր տարրերի, վորոնք խիստ բայլեիկյան բնույթ չունեն։ Այդ վոչ բայլեիկյան տրամադրութիւնների արտահայտիչ Տրոցկին իրեն նկզ եւ գգում հին լենինյան տակտիկայի սահմաններում։ Նա անկեղծորեն համոզված եւ, վոր լենինի միջոցներն այժմ պետք չեն, յերբ կուսակցութիւնը գործում եւ այսպիսի լայն ասպարիզում։ Նրա կարծիքով կուսակցութիւնը պիտի դառնա այլապէս՝ թեկուզ եւ չկազմակերպված ուղղութիւնների, Փրակցիաների, նրբերանգների բով։

Յետեւ մենք գիտենք, վոր մի կուսակցութիւն, վորը գլուխ եւ կանգնած կառավարութեան եւ վորը ճնշել եւ մյուս բոլոր վոչ-խորհրդային կուսակցութիւններին, այդ կուսակցութեան մեջ անխուսափելիորեն այսպէս թե այնպէս արձագանք են գտնում այն հասարակական պրոցեսները, վորոնք մեր ամբողջ յերկրում զարգանում են կամ տակաւին նշմարվում են, մենք՝ լենինյաններս դրանից անում ենք այն յեղրակացութիւնը թե՛ կուսակցութիւնը պիտի ունենա մաքսիմալ միատարրութիւն, ղեկավարութեան մաքսիմալ ամբողջութիւն, վոր կուսակցութեանը հարկավոր եւ մաքսիմալ չափով պատվաստել լենինի դմ։

Խնդիրն այն չէ, վոր կուսակցութիւնն ահանջները բամբակ խրի ու ջանա չը լսել, թե յերկրում ի՞նչ եւ հասունանում։ Ընդհակառակը։ Զորաշարժ անելը, յերբեմն զիջելն անհրաժեշտ եւ։ Բայց հենց դրան համար հարկավոր եւ, վոր կուսակցութիւնը միտ անվթար, այս-

ինքն բայլընկերյան կուսակցութիւն: Գիտեմ լենինիզմը, վոր գորաշարժ անելով, նահանջելով ու հարձակվելով, հարմարվելով ամենաբարդ շրջապատին, նա միշտ ել ֆուտ և իրր բայլընկեր, այսինքն հետադնդում և պրո-լետարիատի շահերը մի գյուղացիական յերկրում:

Մինչդեռ Տրոցկին ներկա դրութեան բարդութիւնից (կամ թե նրանում արդեն հասունանում և) այլ յեզրակացութիւններ: Նրան թվում և, վոր վարկ-մի «աղանդավորական» (իրր թե աղանդավորական), ժայտակուռ «միայն մի «խմբակի» սագական բայլ-շեղմը ներկայումս տանում և դեպի «յերկրի խորտա-կումը»:

Նրան թվում և, վոր՝ կուսակցութիւնն այժմ պիտի դառնա այլ և այլ հոսանքների ու ֆրակցիաների մի միութիւն, վոր՝ նա անմիջականորեն չպիտի դեկա-վարի պետական ու տնտեսական ապարատը, վոր՝ նա պետք և ընձեռի ընդարձակ ապարեղ բուրժուական սպեցալիտներին և այլն:

Տրոցկու այդ գաղափարը՝ ներկա միջ-դպին շրջապատում տրամաբանական վախճանի հասցնելով՝ լավագույն դեպքում տանում և դեպի լենինիզմի բայլ-շեղմյան կուսակցութեան տեղի տալը մի ինչ-վոր «լայն» աշխատավորական կուսակցութեան առաջ, վորը կլինի անգլիական Մակդոնալդյան «լեյբուր կուսակցու-թիւնը» խորհրդային հրատարակութեամբ, այնպիսի մի լայն կուսակցութեան, վորին կարողանային միանալ «աշխատավորութեան» բոլոր կազմակերպութիւնները՝ ի թիվս այլոց և նրանք, վորոնք չեն կարող կոչվել բառի անմիջական իմաստով բայլընկերյան:

Շատ կարելի յե, վոր Տրոցկին իր գաղափարը տակաւին չի հասցրել տրամաբանական վախճանի, սա-կայն նա անխուսափելիորեն գնում և այդ ուղղութեամբ,

յեթե միայն կանգ չառնի ու հետ չդառնա դեպի բայլ-շեղմ:

Այժմյան շրջապատում աշխատող կուսակցութեւնը, հարկավ կարիք ունի մի շարք միջանկյալ մեխանիզմ-ներին, վորոնք տանում են դեպի բանվորական մասա-ները, ի թիվս վորոց՝ և դեպի նրանց հետամնաց շեղ-տերը: Նա կարիք ունի մի շարք շարժիչ փոկերի, վո-րոնք աղանդում են նրա ազդեցութիւնը գյուղացիու-թեան, ծառայողների, ինտելիգենցիայի և այլն մեջ:

Պրոլետարիատի դիկտատուրան ապահովող համա-դրութիւնը (սիստեմը) բարդ և (խորհուրդներ, պրոֆ-միութիւններ և այլն), սակայն դրանից չի հետեւում, վոր ինքը կուսակցութիւնը կարող և դառնալ հոսանք-ների ու ֆրակցաների միութիւն, մի տեսակ «կարծիք-ների պարլամենտ», աջ թե, ձախ թե, կենտրոն ու պարլամենտարիզմի այլ սքանչելիքներ:

Հարցը գոհակցնել հարկավոր չե: Անշուշտ, 1924 թվի բայլընկերյան կուսակցութիւնը չի կարող հասա-րակ կերպով ընդորինակել, ասենք թե, 1914 կամ մինչ-չե անգամ 1917 թվի բայլընկերյան կուսակցութիւնը:

Մենք չենք կարող, պարտավոր ել չենք սահմա-նափակվել՝ մեր կուսակցութեան մեջ ընդունելով մի-այն և յեթ բանվորներին: Լենինյան կոչով հնարա-վորն արինք մեր կուսակցութեան մեջ արդյունաբերա-կան բանվորների տեսակարար կշիռն աւելացնելու: Մի յերկու տարվա ընթացքում մենք կանգնեցրել ենք գյուղացիութեան մուտքը կուսակցութեան մեջ: Բայց մենք բոլորս հիմի արդեն գալիս ենք այն յեզրակա-ցութեան, վոր նորից անհրաժեշտ և կուսակցութեան դռները բաց անել գյուղացիութեան մի նշանավոր մասի համար:

Գյուղացիական յերկրում պետութիւնն կառավարող բանվորական կուսակցութիւնը պետք է ունենա իր կուսակցութեան անդամների շարքում գյուղացիներից մի վորոշ տոկոս: Հենց ամբողջ խնդիրն այն է, վոր Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան մեջ մեր առաջ դրված են վոչ «ընդհանրապէս» բանվորական կուսակցութեան խնդիրներ, այլ գյուղացիական յերկրի բանվորական կուսակցութեան խնդիրներ: Այստեղից ել բղխում է կուսակցութեան սոցիալական կազմի հարցի բարդութիւնը... յերբ այդ կուսակցութիւնը պետութիւնն է կառավարում:

Կուսակցութեան Երբեմն որինեցացիան

Այսպէս, ուրեմն, դրութիւնն ամենեւին այնքան ել պարզ չէ, մեծ են դժվարութիւնները: Մեր կուսակցութեան կազմի կանոնավորումը բարդ ու դժվարին գործ է: Նա սերտ կապ ունի ամենադժվարին, յերբեմն ամենանուրբ քաղաքական խնդիրների հետ: Կուսակցութիւնը ստիպված է գործադրութ անելու այդ ուղղութեամբ ևս, այսինքն իր սեփական սոցիալական կազմի նկատմամբ: Կուսակցութիւնը չի կարող ներկա դարեչըջանում մնալ նուէնքան միատարր, վորքան մինչև իշխանութիւնն նվաճելն էր:

Բայց այնուամենայնիւ կուսակցութեան քաղաքականութիւնը, ընդ սմին և կուսակցութեան ղեկավարութիւնը պետք է՝ ինչպէս և առաջ՝ մինչև ուղն ու ծուծը առգործված լինեն բայլելիզմով, ինչպէս Լենինն է ուսուցել: Բանվոր դասակարգն իր գերիշխանութիւնը (հեգեմոնիան) իրագործում է հեղափոխու-

թեան միջոցով, իսկ մեր կուսակցութիւնը այդ գերիշխան դասակարգի ղեկավար առաջամարտին է:

Գերիշխան դասակարգի ուղիղ ըմբռնած շահերն, անշուշտ, պահանջում են գյուղացիներին վորոշ զիջումներ անել՝ վորզ քաղաքականութիւնը համակերպել գյուղացիութեան մի քանի արմատական շահերին: Բայց այդ զիջումների և համակերպման սահմանները վորոշում են բանվոր դասակարգն ու նրա ավանգարդը, յեղեկտ ունենալով հեղափոխութեան և ղեկավարվող բանվոր դասակարգի հիմնական շահերը:

Այստեղից բղխում է կուսակցութեան ներքին որիննացիայի հարցը—այն՝ վոր կոչում են «ներկուսակցական քաղաքականութիւն»:

1924 թվի պայմաններում գործող բայլելիկյան կուսակցութիւնը իր որիննացիայի հիմքը պետք է դարձնի կուսակցութեան կորիզը՝ բանվոր անդամներին: Մեր կուսակցութեան քաղաքականութեան «ծանրաչափ» (բարոմետր) չեն կարող լինել վոչ ուսանող յերիտասարդութիւնը, վոչ ել մեր կուսակցութեան այլ շերտերը՝ բացի բանվորներից:

Այսպէս, ուրեմն, մենք այժմ կարող ենք արդոք թուլատրել մեր կուսակցութեան աջ թևի գոյութիւնը կամ կազմավորումը: Վոչ, չենք կարող:

Այն հանգամանքը, վոր մենք պիտի թուլատրեք մեր կուսակցութեան սոցիալական կազմի վոչ բավականաչափ միատարրութիւն, վոր մենք պիտի կուսակցութեան համար հայտնի քանակով անդամներ գրավենք վոչ-բանվորներից,—այդ պարագայից վոչ մի ղեկավար չի հետևում, վոր մենք կուսակցութեան քաղաքականութիւնն ել պիտի նոսրացնենք, ջրալի

դարձնենք, վոր կուսակցութեան ղեկավար շտաբն եւ պիտի անմիատարր լինի, վոր կուսակցութեան շտաբն եւ ֆրակցիաների բոլոր պիտի լինի: Ընդհակառակ՝ հենց այն պատճառով, վոր ներկա հանգամանքներում կուսակցութեանը չի կարող իր կազմով այն չափով միատարր լինել, վորքան նախ քան իշխանութեան նվաճումը՝ կուսակցութեան քաղաքականութեանը պետք է ավելի խիստ լինի, քան յերեւել, և ամենից առաջ ընդունի կուսակցութեան բանվորական խմբի որին տացիրան: Յեւ հենց այդ իսկ պատճառով կուսակցութեան ղեկավար շտաբը պիտի լինի հատկապես տոկուն, հատկապես ամուր, հատկապես Լենինյան:

Ու հենց դրա համար եւ խոսք չի կարող լինել այն մասին թե՛ մեր շտաբը դառնա ֆրակցիաների ու հոսանքների բոլոր:

Որչեկտիվ պայմանները, վորոնց մեջ մեր կուսակցութեանը վիճակված է գործելու՝ այնպես են, վոր աջ թե (կամ հոսանք, կամ ուղղութեան) ստեղծելու վտանգը գոյութեան ունի: Ու ուղղում է հավատարիմ մնալ Լենինի դիմ վոգուն, նա իր ուլթերը պիտի տրամադրի կուսակցութեանը՝ այդ տենդենցի (միտում) դեմ պայքարելու համար: Ներկա կոնկրետ պայմաններում Լենինի դիմ սկզբունքները կարող և ճիշտ կերպով գործադրելով, մենք կարող ենք չթուլատրել, վոր կուսակցութեան մեջ աջ թե կազմակերպվի:

Իսկ նրանք, ովքեր՝ ինչպես Տրոցկին՝ վոչ միայն չեն պայքարում այդ տենդենցի դեմ այլ և հանդիսանում են արտահայտիչ, նրանք, ովքեր կուլի յեն յելում Լենինյան Կենտրոնական Կոմիտեյի դեմ, վորը պարզ տեսնում է վտանգը ու զորաշարժ է անում

բարդ շրջապատում (ինչպես Լենինն է սովորեցրել), նրանք բոլորը դառնում են Լենինի դիմ թշնամիներ:

Յանկանում են նրանք այդ թե վոչ, այդ միևնույն է: Պարզ գիտակցում են թե վոչ—դա ևս միևնույն է: Փաստը մնում է փաստ:

Թերևս հարկավոր լինի մեր միտքը պարզել ավելի կոնկրետ կերպով: Վերցնենք, որինակի համար, յերկու աչքի ընկնող ընկերներ, ասենք, ընկեր Ա և ընկեր Բ: Յերկուսն եւ ամենակարգապահ ու լավագույն ընկերներ են: Սակայն ընկ. Ա-ն հարել է բայլշեի դիմ ալ ժամանակ ու ալ ուղիներով, քան ընկ. Բ-ն: Ընկ. Ա-ն ծագել է գյուղացիական շարժումից, վորը լայն ալիքներով տարածվեց քաղաքացիական կուլի տարիներին, Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Իսկ ընկ. Բ-ն ծագել է բանվորական շարժումից, բայլշեի դիմ հարելով սրանից քսան տարի առաջ: Մեր կուսակցութեան համար թե մեկը և թե մյուսը կարևոր ու արժեքավոր են. բայց հեղափոխութեան կատարյալ հաղթանակի յերաշխիքը այն է, վոր այդ յերկու ընկերների ներկայացրած տարբերը վորոշ մտքով զուգորդվեն: Իսկ յեթե, ասենք, ընկ. Ա-ն սկսեր ձեռնկերպել կուսակցութեան ներսում այն առանձնահատկութիւնները, ինչով գյուղացի կոմունիստը հաճախակի տարբերվում է բանվոր-կոմունիստից, յեթե նա սկսեր պահանջել, վոր կուսակցութեան քաղաքականութեանը ընդունի վոչ թե բանվորների, ալ գյուղացիների որին տացիրան, կամ՝ յեթե նա սկսեր պահանջել, վոր կուսակցութեան գլխավոր շտաբը կերպարանափոխվի ալ և ալ խմբակների բոլոր—նման դեպքում ի՞նչ կասեր մեր կուսակցութեանը ընկեր Ա-ի մասին:

Այդ մտացածին որինակի հման մի բան, թերևս առավել վատթար ձևով՝ Տրոցկին է այժմ անում։ Սա իսկապես սկսում է կուսակցության մեջ արտահայտիչ հանդիսանալ այն ամեն տարրերին, վորոնք բայելե-վրկյան չեն։ Իրոք, նա պահանջում է, վոր կուսակցությունը ուղղություն վերցնի այն ամենի գծով, ինչ վոր բայելիկյան չէ (բառի բուն նշանակությունը)։ Կարող է կուսակցությունը դրա հետ հաշտվել։ Զարմանալի՜ յե սրանից հետո վոր կուսակցությունը Տրոցկուն այդպիսի կրքոտ դիմադրություն է ցույց տալիս։

Այդ հարցը մեր վեճերի գլխավոր հարցն է.

Այդ հարցին լիովին հստակ պատասխան տալու համար, խնդրում ենք խորամուկս լինել հետևյալ հանգամանքներին։ Տրոցկին՝ իբր վայրեն ունհատակա-նություն՝ ունի, ի հարկե, շատ այնպիսի բաներ, վոր բնորոշ են սոսկ նրա անձնականի համար։ Դրանց թվին է պատկանում և այն՝ ինչպես այս որերս արտահայտվեց «Հոկտեմբերի դասերը» կարդացած մի բան-վոր՝ «յեսելը»—շարունակ իր «յեսից» խոսելը, վորով այնքան առատ են Տրոցկու վերջին գրվածքները։ Դրանց թվին է պատկանում և այն, վոր Տրոցկին յերբեմն ստեղծում է այնպիսի քաղաքական պլատֆորմա, վորի վրա կարող է կանգնել միայն մի մարդ—ինքը Տրոցկին, վորովհետև այդ «պլատֆորմայի» վրա բառացիորեն տեղ չի մնում անգամ համախոհներին, վորքան վոր Տրոցկու դիրքի մեջ շեշտուն է անհատակա-նը։

Սակայն և այնպես սխալ կլինի Տրոցկու դիրքի մեջ տեսնել միմիայն անհատականը։ Անտարակույս,

նա անդրադարձնում է մեր շրջապատից և ինչ վոր առավել լայն բան, քան իր անձնականը։ Այսինքն, իհնչ։

Դուք դարձրել եք, ընթերցող, ուղադրություն հետևյալ հանգամանքին։ Սկսած հենց 1922 թ. մանավանդ 1923 թվից մեր յերկրի բարեկեցություն տարակույս աճումն է տեղի ունենում, բավորների տնտեսական վիճակը բարելավվում է, և լավանում նրանց արամադրությունը։

Մինչդեռ հենց այդ ժամանակամիջոցում Տրոցկու բոլոր յիւլյթներին տեսնում ենք, վոր հենց այդ տարիներին նրա քաղաքական տրամադրությունը հետզհետե ավելի ու ավելի փչանում է։

Մեր յերկրի բանվորական լայն մասսաների քաղաքական տրամադրության շեղ գիծը վեր է բարձրանում, Տրոցկու քաղաքական տրամադրության գիծը՝ իջնում։ Հենց այդ ֆոնի վրա տարածայնությունը Տրոցկու և կուսակցության միջև խորանում է, այն կուսակցության, վոր վոչ այլ ինչ է, բայց յեթե բան-վորական մասսաների առաջնութայը։

Տրոցկին իմպրեսիոնիզմին ավել ու ավելի տուրք է տալիս, ավելի հաճախ է իրերը տեսնում սև գույ-նով, գուշակում յերկրի կործանումը (անցյալ տարվա դիսկուսիայի սկզբում) այն ժամանակ, յերբ յերկրի տնտեսական դարգացման դրությունը գտնվում է անկասկածելի դարգացման նախորեյին, յերբ Տրոցկին հաճախ անհաջող գյուտեր և անում, սխալ դիագ-նոզներ դնում և առաջարկում էլ ավելի սխալ բուժ-ման միջոցներ, իր համախոհներին կորցնում և այլն։

Հիշենք, վոր Բրեստի հաշտության վեճի ժամա-

նակ, յերբ Տրոցկին ընդհարվում եր Լենինին ու լենինյան Կենտկոմին, Տրոցկին իր կողմն ունեւր կուսակցութեան բաւական նշանավոր մի մասը: 1921 թվին (պրոֆմիթութիւններէ դիսկուսիայի ժամանակ) Լենինի ու լենինյան Կենտկոմի հետ յերկրորդ ընդհարման միջոցին, Տրոցկին ելի իր կողմն ունեւր համագումարի մոտ մի հինգերորդ մասը: Յեւ այդ այն միջոցին, յերբ վողջ կորսակցութեան մեջ Վլադիմիր Իլյիչի հմայքն արդեն իշխում եր:

Անցյալ տարւա դիսկուսիայի ժամանակ Տրոցկու համախոհների թիւն արդեն բաւական նվաղ եր, բայց այնուամենայնիւ կային հարյուրավոր մարդիկ, վորոնք պատրաստ եյին մինչև վերջը պաշտպանելունրա պատփորման: Իսկ լենինյան Կենտկոմի դեմ ածմյան հարձակման միջոցին Տրոցկու պատփորման պաշտպանել ցանկացողներին արդեն կարելի յի գրեթե մատենրի վրա հաշվել: Դա հո պատահականութիւնն չէ:

Ինչով բացատրել այդ ոտարոտի դրութիւնը: Տնտեսութիւնը աճում ե, բանվորների տրամադրութիւնը բարձրանում, կուսակցութեան միութիւնն ամբանում, այն ինչ բանվորական շարժումը գեկավարելու հովակնութիւնն ունեցող առաջնորդներից մեկի՝ Տրոցկու տրամադրութիւնը շարունակարար իջնում ե, չենց միայն այդ հանգամանքը ցույց ե տալիս, վոր Տրոցկին վերջին տարիներս, անշուշտ, իր կամքից անկախ՝ հանդիսանում ե պրոլետարական մասսաների տրամադրութեան վնջ մշտական արտահայտիչը, այլ յերբեմն ակամայից հասարակութեան ինչ-վոր այլ շերտերի տրամադրութիւնն ե արտահայտում: Այսինքն, վորմնց:

Այդ հարցին պատասխանելը, հարկավ դյուրին չե:

Ուշագիւր հետեւելով Տրոցկու ձեակերպւող պատփորմի վորստպատույտ դնին, ճշգրիտ կերպով հետեւելով նրա վերջին 2—3 տարւա նորագույն քաղաքական եվոլյուցիային, դժվար չի յերբեմնապես հանդիպել հակասական թվացող մոմենտների: Վորեն անփորձ ընկեր յերբեմնապես կարող ե մինչև անգամ կարծել, վոր Տրոցկին մեր լենինյան Կենտկոմը իբր թե քննդատում ե վոչ թե աշից, այլ ձախից:

«Զախ» Բրազներ յեւ «աջ» փաստեր.

Հիրավի, միթե՞ Տրոցկին չի, որինակի համար, վոր մեղադրում ե Կենտկոմին ե Կոմիտերնի մեջ յեղած նրա ներկայացուցիչներին թե՛ նրանք գերմանական հեղափոխութեան «պատեն ժամը փախցրել են»: Միթե՞ դա քննադատութիւնն չի ձախից: Մինչդեռ յեթե խորը թափանցենք Տրոցկու դիրքին հենց Կոմիտերնի տակտիկին կապւած հարցերում, յեթե վերհիշենք, վոր այդ մասին ձախ Փրազներ գրելուն առնթիւ իրողութիւնն ե այժմ գերմանական կուսակցութեան աջ թեկին նրա ոժանդակութիւնը վողջ 1923 թվի ընթացքում, մյուս կողմից յեթե հիշենք նաև այն, վոր անցյալ տարւա դիսկուսիայի միջոցին Տրոցկու դիրքը պաշտպանութիւնն ե գտնում Կոմիտերնի բոլոր սեկցիաների աջ տարրերի կողմից, — յեթե այդ բոլորը վերհիշենք, հարցը մեր առաջ կպատկերանա բոլորովին այլ լուսաբանութեամբ:

Վերհիշենք, վոր դեռ 1924 թվի հունվարին Տրոցկու, Ռադեկի ե Պլատաեկովի ղեղուչութեայի նախագծում ասւում եր, վոր յեթե 1923 թվի հոկտեմբերին, գերմանական կուսակցութիւնը ապստամբեր՝ այն

ժամանակ նա հիմա (1924 թվի հունվարին) կներկայացնե՞ր ինքնին ավերակների մի կույտ,—վերհիշելով այդ՝ պարզապես տեսնում ենք, վոր Տրոցկու գիրքն այդ հարցում նույնչափ ամուր ե, վորքան «Հոկտեմբերի դասերում» քննվող հարցերում—միանգամայն ծայրը ծայրին չի կարողացել հասցնել:

Սակայն այդ ամենը մեր վեճերի մակերեսային հանդիսատեսին միշտ այնքան ել պարզ չի յերևում: Սրանից հետևում ե այն, վոր վոմանք Տրոցկու քննադատությունը մեր կենտրոնի դեմ ուղղած, թյուրիմացաբար ընդունում են իբր քննադատություն ձևից:

Կրկնում ենք, Տրոցկու գործունեություն մեջ շատ բան անհատական ե, շատ բան քմահաճ, շատ բան արտաքուստ շլացուցիչ: Դեռ վերջնական ձև չի ստացել նրա պլատֆորման: Տրոցկու քաղաքական գիրքը փայլում ե ծիածանի բոլոր գույներով:

Կարելի չե այսպիսի մի նմանություն կիրառել: Վերցրե՞ք տարբեր գույնի ելեքտրական ճրագներից շինված մի կամար: Յերևույթը շատ փայլուն ե: Ձեր առաջ կան ծիածանի բոլոր գույները, ձեր առաջ կան բազմաթիվ կարմիր, կանաչ, կապույտ, ճերմակ ճրագներ: Բայց հո, ճրագների գույնը վերջ ի վերջո յերկրորդական մի բան ե: Այդ բոլորի յեռքին կա մի վորոշ նյութ—ելեքտրականությունը:

Այդպես ել Տրոցկու այժմյան գիրքը: Արտաքուստ նա եւ տակավին փայլում ե ծիածանի բոլոր գույներով: Խնդիրն այն ե, վոր հասկանանք, թե ինչն ե այստեղ սուբստանցիան, ինչն ե կազմում հիմքը: Ու ահա մենք պնդում ենք, վոր հիմքն—իսկ այսօրվայն ե, վոր դա բայելեիկյան չե, վոր առ այժմ—իսկ կարելի չե բնութագրել իբր—վոչ լենինիզմ:

Ուսկից ե առաջանում այդ արտաքին բաղմերանգությունը: Դա բացատրվում ե նրանով, վոր Տրոցկու արդեն սկսած քաղաքական գունաթափումը տակավին ավարտված չե: Առաջին հերթին դա բացատրվում ե նրանով, վոր Տրոցկու դեպի յետ թավալող եվոլյուցիան տեղի ունի անցողիկ շրջանի պայմաններում: Այդ անցողիկ շրջանում դեռ շատ բան պարզ չե, դեռ շատ բան հստակ չե նեպի ամբողջ բաղմերանգություն մեջ: Տրոցկին այժմ ցուցնում ե վոչ թե «ընդհանրապես» բայելեիզմի նահանջը, այլ նահանջ բայելեիզմից նեպի անցողական շրջանում:

Բայց այս խայտարղետություն միջից Տրոցկու այս բոլոր հանկարկածակի յեվոլյութներում, վերջին տարիների նրա քմահաճ քաղաքական դարգացման վոլորապատույտ ուղիներից—այդ բոլորից իր համար ճամփա չե հարթում մի շատ վորոշ քաղաքական տենդենց:

Մի վայրկյան յերևակայենք թե ի՞նչ կլինե՞ր մեր յերկրի ու կուսակցության վիճակը, յեթե մեր կուսակցությունը փոխանակ կատաղի ընդդիմադրություն ցուցնելու Տրոցկու գեղատոմսերին, ընդունե՞ր 1921 թվից ի վեր նրա ներկայացրած կարևոր առաջադրությունները: Մի կողմ նետենք ինչ վոր յերկրորդական ե, վերցնենք միայն ամենազլխավորը—Տրոցկու առաջարկությունը 1921 թվից ի վեր:

Յեթե մենք համաձայնեյինք Տրոցկու առաջարկությանը՝ դա կնշանակե՞ր, վոր պիտի պետականացընեյինք պրոֆմիլությունները, պետք ե տեղի ունենար պրոֆմիլությունների տխրահույսակ «կցումը» պաշտոնական ու պետական և տնտեսական որդաններին, մի խոսքով՝ պրոֆմիլությունները, վոր ներկայիս մեր ա-

մենալալայն բազան են, վոր միացնում ե 6 միլիոն բան-
վորներ ու ծառայողներ՝ պիտի դառնային պաշտոնա-
կան մեքենայի վերադիր, ավելորդ մասը: Ավելի ես.
այլ խոսքով՝ ինքներս մեր սեփական ձեռքերով այն
ժամանակ պիտի ստեղծեյինք մենշկիզմի համար ան-
խորտակելի պատվանդան, հետևապես՝ ինքներս մեր
ձեռքով պիտի ական դնեյինք պրոլետարիատի դիկ-
տատուրայի տակը:

Կուսակցութիւնը պետք ե յետ մղվեր տնտեսա-
կան ու պետական որդանների անմիջական ղեկավա-
րութիւնից: Խորհրդային ապագարատը (հիշենք ինչ ե
գրեկ Լենինը դրա մասին) լայն ինքնուրույնութիւն
կատանար: «Խորհուրդների ազատագրումը կուսակցու-
թիւնից»—այդ նշանաբանը կմնար վոչ թե սմինավե-
խովցիների յերկերի եջերում, այլ կմտներ իրական
կյանքը՝ թեկուզ ե մասնակի չափով: Վոր այդ միտումը
անհաշվելի կործանարար հետեանքներ կունենար—այդ
բանը հաղիվ թե այժմ կարիք կա բայլելիին բացա-
տրելու: Մասնագետները (սպեց) մեր աշխատանքի
բոլոր ճյուղերում շատ ավելի մեծ ազդեցութիւն ձեռք
կբերեյին, վնչ միայն ռազմական գործում, այլ ե բո-
լոր մյուսներում: Հաղիվ թե կարիք կա ազատեցնելու,
վոր դա Տրոցկու քաղաքական պլատֆորմայի ամենա-
կարևոր մի գիծն ե, մեր կուսակցութիւնից դատվելու
կարևորագույն կետերից մինը:

Թող մեր խոսքերը չհեղաշրջին: Անշուշտ, բացար-
ձակապես անհրաժեշտ ե անկեղծ մասնագետներին ա-
ռաջ քաշելն ու այնպիսի մի մթնալորդ ստեղծելն, վոր
հնար ընձեռեր նրանց աշխատելու իսկապես գործին ի
նպաստ: Հարկավ, իր ուշիւ պահում ե այն ամենը,

ինչ վոր Լենինն ասել ե այդ հարցի մասին ե ինչ վոր
վորոշել ե մեր կուսակցութիւնը: Հարկավ, խոսք չի
կարող լինել հակասացային առանձնահատուկ տրա-
մադրութիւնները խրախուսելու մասին: Բայց յեթե
սպեցների հարցը վճովեր վոչ թե ըստ Լենինի, այլ
ըստ Տրոցկու, իրապես դա կնշանակեր քաղաքական
ամենամեծ զիջում նոր բուրժուազիային: Ներ-կու-
սակցական կյանքի խնդիրներում մենք պիտի խոստո-
վանեյինք, վոր կուսակցութեան համար «ծանրաչափ»
հանդիսանում են վոչ թե դադդյահի բանվորները, այլ
բարձր կրթական հիմնարկների յերիտասարդութիւնը,
վորի շարքերում անշուշտ կան հոյակապ պրոլետարա-
կան տարրեր, բայց վորի թվում կան և՛ վոչ վորքա-
թիվ չափով՝ այնպիսիք, վորոնք սոցիալապես հազարա-
վոր թեկերով կապված են մանր-բուրժուազիային, ու
նրա միջոցով նեպի ե նոր բուրժուազիայի հետ:

Դրամական ռեֆորմը մենք չեյինք ունենա, վո-
րովհետե՛ ըստ Տրոցկու՝ սկզբում հարկավոր ե «վերա-
կանգնել» արդունարեւութիւնը, ապա թե ձեռնար-
կել դրամական ռեֆորմի: Ասել չի ուզիլ, վոր յեթե
ընդունեյինք այդ «հանճարեղ» առաջարկութիւնը,
մեր յերկրի տնտեսութեան մեջ կնկներ բոլոր սոցիա-
լիստական տարրերի տեսակարար կշիռը, ընդ սմին
կամբանար նոր բուրժուազիան:

Գյուղացիութեան հարցում՝ վորի վրայից շարու-
հակ «ցատկում ե» Տրոցկին՝ կանեյինք մեծագույն սը-
խալներ: Փոխանակ շաղկապման, այժմ կունենայինք
կատարյալ անջատում: Դադաքական սխալների հե-
տեանքով մի կողմը շարտված գյուղացիութիւնը այլ

քաղաքական ղեկավարներ կորսնենք և զրանց կդատենք անշուշտ նոր բուրժուազիայի շրջանում:

Խորհուն ընկերներից վոչ վոք չի ասել, վոր այսօր երեւմած կետերը (կարելի չե՞ր դեռ բազմապատկել) մենք ենք հնարել:

Յուրքանչյուր լուրջ բայլեիկ կասի, վոր Կենտկոմի և Տրոցկու մեջ կատարվող պայքարը վերը հիշած խնդիրների հետևանքն է, և վոչ թե անցյալ տարվա ձյունի, վոչ թե 7 տարի առաջ կատարած սխալների և վոչ էլ հետևանք «անձնական» խնդիրների, ինչպես կարծում են քաղքենիները:

Նոր բուրժուազիայի իդիոլոգիան.

Հարցնում ենք՝ ի՞նչ տեսք կունենար մեր յերկիրը, յեթե մենք այդ վեց հարցերի լուծումը տանելիք այն ճամբով, զեպի վորը մեզ մղում եր Տրոցկին, յեթե մենք Տրոցկու այդ սխալներին բոլշևիկյան անհամբերողությամբ դիմադրություն ցույց չտայինք: Ի՞նչ կլինէր այն ժամանակ Խորհրդային Միության վիճակը:

Այն ժամանակ նա կլինէր նեպի աշխարհ այն մտքով և այն չափով, վորքան ակնկալում էին նոր բուրժուազիայի իդիոլոգները: Ունեպական Խորհրդային աշխարհը սոցիալիստական դարձնելու շանսերը՝ ինչպես Լենինն է ավանդել՝ խիստ փոքր, անգամ չնչին կլինէր:

Յեթե այդ բոլորին ավելացնենք Տրոցկու ոպպորտյունիստական սխալները միջազգային քաղաքականության հարցերում (դեմոկրատ—պացիֆիստական ժամանակաշրջանի գերազնահատում, ամերիկյան գեր-խմբերիալիզմի հրաշալի խաղաղարար հատկու-

թյունների դերազնահատում, սոցիալ-դեմոկրատիայի հակահեղափոխականության և ֆաշիզմի տեսականության թերազնահատում), նույնպես և Կոմիւնտերնի այլ և այլ սեկցիաներում բոլոր աջ—կիսասոցիալ-դեմոկրատական տարրերի պաշտպանությունը, այն ժամանակ պարզ կլինի թե՛ գեպի ուր և քաջ տալիս Տրոցկին մեր կուսակցությունը: Վորոշ «սիստեմ» կա Տրոցկու սըխալների կուտակումների մեջ: Այդ բոլորը մի խոսքով կոչվում է—աջ թեքում:

Մեր յերկրի նոր բուրժուազիան—իսկապես նոր է և վոչ թե հին բուրժուազիան է: Նա փորձված է, «Հոկտեմբերյան դասերից» նա ևս դասեր է առել: Նա տեսել է մասսաներին գործի վրա: Հոկտեմբերյան հեփոխության սկզբում նա տեսել է բայլեիկյան անզուսպ հաշվհարդարը բուրժուազիայի հետ, իսկ 1921 թվին զիջումներ արին նրան՝ յերբ նույն ազնուսպ բայլեիկները հարկադրված յեղան նեպը մոցնելու: Նա այժմ գիտե ուժերի փոխհարաբերությունների արժեքը, վորն արտահայտվումն է միջի այլոց, այն բանով, վոր առաջին խորհրդային յերկիրը գտնվում է միջազգային բուրժուական շրջափակման մեջ: Նա ունի իր նոր ինտելիգենցիան, վոր մի նշանավոր չափով կըրթվել է մեր բարձրագույն դպրոցներում: Նա սովորել է խորը թափանցել մեր սեփական կուսակցության ներսում կատարվող պայքարի տենդենցներին: Նա սովորել է ոգտվել խորհրդային լեզալ պայմաններից: Իրանք այլ ևս կոլուպայկներն ու Ռազուլայկները* չեն: Իսկ մի բուրժուազիա յե, վոր անցել է մեծագույն հեղափո-

*) Ինչպես հայերիս մոտ Զիվիմոլները, Մասիսյանները և Ելիզարյանները: Ծ. Խ.

խության կրակի միջով: Դա մի բուրժուազիա չէ, վոր կարողանում է մտածել իր շահկապի մասին պաշտպանության վերին խավերի, միջազգային բուրժուազիայի առաջնորդների հետ: Մի խոսքով՝ դա մի բուրժուազիա չէ, վոր ոժտված է առավել նրբացած դասակարգային հոտառությամբ, ավելի ճկուն է, հեղափոխական փորձառությամբ ավելի խելահաս դարձած, բանվորական կուսակցությունը, նրա ներքին նրբերանգներն ավելի հասկացող է այլն: Դա մի բուրժուազիա չէ, վորին գծախառնությունը սովորեցրել է ժողովրդական մասսաների մաքին մոտենալու կարիքը գնահատել: Չպետք է ծածկել, վոր մեր պետական ապարատի սոցիալական կազմն այնպես է, վոր այդ ապարատի պերսոնալի մի նշանավոր մասը հանդիսանում է այդ նոր բուրժուազիայի ագենտուրան:

Այդ նույնը պետք է, վոր ասենք նաև նոր ուսանողության և ընդհանրապես նոր ինտելիգենցիայի մի զգալի մասի նկատմամբ:

1921-1924 թ.թ. անցողիկ շրջանում բայելեիկյան կուսակցության առաջ պնդել, վոր պրոֆմիթությունները պետականացվեն, պետական ապարատն «աղատագրվի» կուսակցության վերահսկողությունից, սակցներին տրվի ազդեցության մեծ հնարավորություն, կուսակցության քաղաքականության համար ընդունելի համարվի իբր ծանրաչափ ուսանողների որիննացիան, դրամական սեփորմը հետաձգվի՝ ընդ մին գոռալով յերկրի կործանման մասին, կիսամենշնկյան սլաքար հարուցանելով կուսակցության դեմ հանդես դնող րատիայի՝ այն մեկնությունը, վոր տվել է դրան Տրոցկին անցած տարի, — այդ ամենը նշանակում է հակառակ իր

կամքի, որպեսզի վորեն ոժանդակել նոր բուրժուազիան: Տրոցկին ուզում է մտնել մի դռնից, բայց մտնում է այլ դռնից: Նա ցանկանում է կռվել «հին բայելեիկներին» չափազանց աղանդավորության դեմ, վորը նրան թվում է «շրջանակային նեղություն», իսկ կրոնում է իրապես բայելեիզմի հիմքերի դեմ: Իրապես՝ ինքն այդ անշուշտ չցանկանալով անփոխարինելի ծառայություն է մատուցանում դասակարգային թշնամուն:

Ձեռքնեք սրտի վրա դրած՝ հարցնում ենք Տրոցկու յերբեմնի ու արդի կողմնակիցներին. միթե նրանք չգիտեն, վոր բայելեիկյան կենտկոմի դեմ Տրոցկու ամեն մի յելույթը, սկսած 1921 թվից, վորջ հակաբոյլելիկյան բանակի համար, հետզհետե աճող ուրախություն է պատճառում: Պատահական է այդ:

Թող մեզ սխալ չհասկանան: Դեռ Մարքսն ասել է, վոր կարելի չէ մանր բուրժուազիայի տրամադրություն գործնական արտահայտիչը լինել առանց փոքրիկ խանութպան լինելու:

Անշուշտ, Տրոցկին լավագույն ցանկություններ ունի: Բայց՝ բարի ցանկություններով է ստահատակված դժոխքը:

Մի անգամ ընդ միշտ հարկավոր է, վոր Տրոցկին հրաժարվի փրկելու մեր կուսակցությունը կարճեցյալ սխալներից, այլ հասկանա ու խոստովանի իր սեփական քաղաքական սխալները, վորոնք մեծ մասամբ անացողդ են նրա 1903—1917 ժամանակաշրջանի քաղաքական իդիոլոգիայի, յերբ Տրոցկին հանդես եր գալիս իբր բայելեիզմի բացճակատ հակառակորդ:

Պետք է դադարել «սոմարային ծրագրով» յուրաքանչյուր տարի, իսկ վերջերում, ամեն կիսամյակում, կուսակցութեան համար հերթական «կրիզիսներ» առաջացնելուց: Հարկավոր է հասկանալ, վոր վրա պրծնելով, հանկարծուստ հարվածով վոչ վոքի չի հաջողվի լենինիզմը տրորելով դարձնել տրոցկիզմ: Մի խոսքով պետք է ըմբռնել, վոր բայլշևիզմը—բայլշևիզմ է:

Ի՞նչ անենք.

Իրերի այս վիճակում, վո՞րն է յեւքը: Հապա ի՞նչ անենք:

Պատասխան—դատարկ բան է: Խոսք անգամ չի կարող լինել դրա մասին: Մեր կուսակցութեանն այժմ միաբան է ավելի, քան յերբեք:

Բեկվածք—դատարկ բան է: Ձկա վոչ մեկը, վոր բեկվել ուզի, կուսացութեանն էլ չի ցանկանում բանն այդ տեղին հասցնել:

Կուսակցական խտութեանն—դա ևս դատարկ բան է: Այդ վոչ վոքին հարկավոր չէ:

Այժմ այլ բան է հարկավոր:

Ի՞նչ է հարկավոր: Հարկավոր է, վոր կուսակցութեանը լենինիզմի դեմ կատարվող հարձակումներից ապահովի իրեն: Լուրջ կուսակցական յերաշխիքներ են հարկավոր, վոր կուսակցական վճիռները Տրոցկու համար ևս պարտադիր լինին: Կուսակցութեանը վիճաբանական ակումբ չէ, են էլ այն կուսակցութեանը, վոր գործում է այսօրվա բարդ մի միջավայրում, վորպիսին մերն է: Այսօրվա նշանաբանն է.—կուսակցութեան բոլոր խավերի բայլշևիզմումը, գաղափարական կռիվ տրոցկիզմի դեմ, ամենից առաջ—լուսաբանու-

թյուն, լուսաբանութեան, դարձյալ լուսաբանութեան:

Մեր կուսակցութեան կեսից ավելին բաղկացած է համեմատաբար ջահիլ անգամներից: Նրանցից շատերը ըմբռնում են Տրոցկու հակալենինյան սխալները՝ առայժմ միայն դասակարգային հոռատութեամբ: Հարկավոր է, վոր ամբողջ կուսակցութեանը ուսումնասիրի լենինիզմի և տրոցկիզմի հարցը: Հարկավոր է, վոր ամբողջ կուսակցութեանը տեսնի թե՛ խնդիրն այստեղ յերկու հիմնապես տարբեր սիստեմաների, տակտիկայի և քաղաքականութեան և վերաբերվում:

Խնդիրն այստեղ միայն կուսակցութեան պատմութեանը չէ, միայն նրա անցյալը չէ:

Խնդիրը վերաբերվում է ներկա որվան քաղաքականութեան, մոտեցման յերկու մեթոդներին, վորոնք սերտորեն կապված են այնպիսի շատ հիմնական հարցի, ինչպես բանվոր դասակարգի և գյուղացիութեան փոխհարաբերութեանն է:

Ահա որվա լուրջ խնդիրը—մեր սեփական շարքերի բայլշևիզմումը, վորքան վոր կուսակցութեան ավելի ջահիլ շերտերը դեռ հնար չեն ունեցել լիովին անցնելու լենինիզմի դպրոցը:

Ու այստեղ Տրոցկուն չի կարելի շնորհակալութեան չհայտնել այն բանի համար, վոր համեմատյա դեպս նա տալիս է կուսակցութեանը լավ հնարավորութեան շողափելի կերպով վերլուծելու լենինիզմից շեղումը և խորապես թափանցելու բայլշևիզմի հիմքերը:

Անշուշտ, կուսակցութեանը պետք է աշխատի վորպեսզի կուսակցական դիսցիպլինան ալարտադիր լինի նաև Տրոցկու համար և մենք վստահ ենք, վոր կուսակցութեանը ընդունակ է այդ հաջողություն:

Վորքան կուսակցութեան մեջ լենինիզմի ու տրոյս-
կիզմի շուրջը ստեղծվի սկզբունքորեն ավելի հստակու-
թյուն, այնքան սակավ հող կը գտնի աշխարհի մի
փորձը, վորպիսին ձեռնարկել ե Տրոցկին:

Նման փորձը վորքան քիչ արձագանք գտնի կու-
սակցութեան մեջ, այնքան քիչ ցանկութեան կլինի
կրկնելու այն:

Ներկա դեպքում, հիւրավի, արձագանքը մեծ չէ:

Այժմ Տրոցկին իր պլատֆորման այնպես ե կեր-
պարանափոխել, վոր այդ պլատֆորմայի վրա ըստ
եյութեան խոսելով՝ մի մարդ միայն կարող ե կանգնել
—հենց ինքը Տրոցկին: Ուրիշներին «հրապարակելիում»
տեղ չի մնացել. անգամ նրանց համար, ովքեր պայծա
հաճախ պաշտպանում եյին Տրոցկուն ու նրա սխալ-
ները:

Անցյալ դիսկուսիայի ժամանակ Տրոցկին ուսա-
նող յերիտասարդութեան հայտարարեց իրը ճշտագուն
«ծանրաչափ»: Մենք համաձայն չեյինք, վոր դա իրա-
պես ամենալավ ծանրաչափն ե: Համաձայն չենք ե
հիմա: Սակայն՝ հարկ ե նկատել, վոր անգամ այդ վոչ
իդեալական ծանրաչափն այս դեպքում ցույց տվեց
վոչ այն, ինչ վոր անցած տարի, այլ այն թե՛ չի ու-
զում լենինիզմը ծածկաբար փոխված ու փոխարին-
ված տեսնել տրոցկիզմով:

Տրոցկուն յետ պահելու համար ապագա սխալ-
ներից, վորոնք նրան ավելի ես հեռացնում են բայ-
շերդից, դա—նրա այժմյան սխալին ամենից միահա-
մուռ դիմադրութեան ցույց տալն ե: Յեթե վողջ կու-
սակցութեան իբր մի մարդ յեւնի Տրոցկու ներկա
շեղումի դեմ, այն ժամանակ հուսանք, վոր ինքն ա-
ռաջինն իր սխալը կշտկե:

Այն, ինչի մասին վոր խոսեցինք նախորդ գլխում,
անշուշտ, դեռ ավարտված մի պրոցես չե ներկայացնում:
Դա սոսկ տեսդենց ե: Այդ տեսդենցի վողջ կործանա-
բարութեանը տեսնելով, կուսակցութեան համակ միա-
բանութեանը Տրոցկու խոշոր սխալի դեմ նկատելով՝
Տրոցկին, հուսանք, վոր կթողնի խոտոր ուղին:

Լենինը շատ անգամ ե ձևակերպել Տրոցկու
քաղաքական գարգացման «որոնքը».—յերբ գործն ա-
պրում ե վերելքի շրջան, Տրոցկին ըստ մեծի մասին
բայշերդից գծին ե մոտենում: Յերբ դեմ ենք ատնում
ձգձգումների կամ արիքը ժամանակավոր իջնում ե.
Տրոցկին թեքվում ե դեպի աջ:

Հարկավոր ե վոր ամբողջ կուսակցութեանը գա-
ղափարական դիմադրութեան ցուցահանի Տրոցկուն
իր այժման չափազանց աջ գնացած թեքումից փրկելու
համար:

Կուսակցութեանը կասի իր վերջնական խոս-
քը ե մի անգամ ել կանարգվեն թշնամիների վաղա-
ժամ չարախնդաց սպասելիքները, իսկ բայշերդից
կուսակցութեանը կստանա նոր, ավելի ես ամրակուռ
կարծրութեան, ու անաղարտ լենինիզմը մեր կուսակ-
ցութեան բոլոր անդամների համար կդառնա ամենորոյա
մշտական զենք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0185759

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

1. Ստալին—Տրոցկիզմ թե լենինիզմ — 10 կ.

2. Գ. Զինովեվ—Բալշևիզմ թե տրոցկիզմ — 25 կ.

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

1. Կամենևեվ—Լենինիզմ թե տրոցկիզմ

ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ
